

**Իվան Վիռիպան**

**«ԴԵԼԻ» ՊԱՐԸ**

**(Յոթ պիես՝ մեկ ամբողջություն)**

## Պիես № 1

### Յուրաքանչյուր շարժում

*Գործող անձինք՝*

*Կատյա*

*Ծեր կին*

*Անդրեյ*

*Բուժքույր*

*Բացվում է վարագույրը: Քաղաքային հիվանդանոցի առանձնասենյակ այցելուների համար: Փոքր սեղան՝ վրան մի քանի ամսագիր, կողքին՝ բազմոց, քիչ ավելի հեռու՝ բազկաթոռ, պատին բժշկական սարքավորումներ գովազդող պաստառներ կան:*

*Կատյան նստած է բազկաթոռին: Նա նայում է ժամացույցին: Նա մի քանի անգամ անընդմեջ նայում է ժամացույցին:*

*Ներս է մտնում Ծեր կինը:*

**Ծեր կին**- Կատյա ...ցավոք, ամեն ինչ վատ է... մայրդ մահացավ:

**Կատյա**- Ֆրիդ: Անսովոր զգացում է: Անգամ չգիտես՝ ինչպես արձագանքել:

**Ծեր կին**-Կուզեի քեզ օգնել, բայց ինչո՞վ: Ես քեզ հետ եմ, դու հասկանում ես, գիտես: Բայց ի՞նչ անել:

**Կատյա**- Այո, տարօրինակ է: Լուրը սարսափելի է, իսկ ես ոչինչ չեմ զգում՝ ոչ վախ, ոչ ցավ: Դու ասացիր, ես լսեցի, ես հասկացա, որ մայրս մահացել է: Իսկ ի՞նչ անեմ: Չգիտեմ՝ ինչպե՞ս արձագանքել: Հավանաբար ես պետք է լա՞ց լինեմ, բայց լացս չի գալիս: Ինչ-որ տարօրինակ զգացում է: Ես ոչինչ չեմ զգում:

**Ծեր կին**- Ես էլ շատ անսովոր զգացում ունեմ: Վիշտդ այնքան մեծ է, բայց ինչո՞վ կարող եմ քեզ օգնել: Քեզ հետ եմ: Բայց ի՞նչ անել:

**Կատյա**- Չգիտեմ ինչ անել: Ինչ-որ տարօրինակ զգացում է: Ավելի ճիշտ՝ զգացում չէ, այլ՝ հակազգացում: Ես զգում եմ... ոչինչ: Հավանաբար սա կոչվում է շոկ: Ի՞նչ ես կարծում, սա շոկ է, չէ՞: Այսպիսի տարօրինակ, ոչ ադեկվատ վարքը երևի հենց շոկային վիճակ է որ կա: Մայրս մահացել է, իսկ ես ոչինչ չեմ զգում: Հետաքրքիր արձագանք է, չէ՞:

**Ծեր կին** - Չգիտեմ: Միակ ցանկությունս քեզ օգնելն է: Բայց ինչպե՞ս: Ի՞նչ կարող եմ անել: Ես քեզ հետ եմ: Քեզ հետ եմ: Գուցե, քեզ խմե՞լ է պետք: Արի գնամ խանութ, խմելու բան բերեմ:

**Կատյա** - Ինչի՞ համար: Առավել ևս, որ պետք է խանութ հասնես: Ոչ, կարիք չկա:

**Ծեր կին** - Որ խմես՝ կթեթևանաս: Հավատա: Գնամ վիսկի գնեմ ու գամ:

**Կատյա** - Ոչ, շնորհակալ եմ պետք չէ: Ես վատ չեմ: Անհեթեթ է: Ես ամեննին էլ վատ չեմ: Այնինչ, պետք է հակառակը լիներ, չէ՞: Ես պետք է շատ-շատ վատ լինեի, չէ՞: Նրան, ում հայտնում են, որ իր մայրը մահացել է, պետք է իրեն շատ վատ զգա, չէ՞: Իսկ ես հեչ, վատ չեմ եմ: Ես ամեննին որևէ բան չեմ զգում: Դու հիշո՞ւմ ես իմ և Անդրեյի հանդիպումը մեկ տարի առաջ: Կհեռում: Հիշո՞ւմ ես:

**Ծեր կին** - Բհարկե: Շատ լավ հիշում եմ: Եվ այն ռեստորանն եմ հիշում, և թե ինչպես էիր դու պարում... պարում էիր բոլորիս համար: Անդրեյը հաճելի և անկեղծ մարդ է: Նրան կարելի է վստահել, չէ՞:

**Կատյա** - Ճիշտ է: Անդրեյը վստահելի է և նա սուրբ է: Գրեթե: Ուզում եմ ասել սուրբ չէ, բայց համարյա սուրբ է: Համենայնդեպս նա երբեք չի ստում: Դժվար է հավատալ, բայց այդպես է: Ես գիտեմ, որ նա մի մարդ է, որ երբեք չի ստում:

**Ծեր կին** - Այո, նա բացառիկ է: Եվ այն, թե ինչպես էր նայում քեզ, երբ պարում էիր: Թե ինչպես էր զգում քո ամեն մի շարժումը: Գիտես, երբ նայում եմ, թե ինչպես ես պարում, ձգտում եմ ձուլվել քո ամեն մի շարժմանը, ես ասես փորձում եմ դառնալ քեզ հետ մի ամբողջություն: Դա այնքան կլանող է, այնքան ձգող, մոգական: Եվ միայն այդպես է պետք նայել պարը: Վստահ եմ՝ բոլորը պետք է այդպես նայեն: Քչերն են, իհարկե, այդպես նայում, գրեթե ոչ ոք: Իսկ Անդրեյը հենց էդպես էր նայում: Նուրբ, զգայուն մարդ է:

*Դադար:*

**Ծեր կին** – Անդրեյ:

*Դադար:*

**Ծեր կին**- Բհարկե հիշում եմ:

**Կատյա**- Նա զանգահարեց ինձ երեկ, կես տարի անց, կես տարի չենք հանդիպել:

**Ծեր կին**-Կես տարի չե՞ք հանդիպել: Ինչո՞ւ:

**Կատյա**-Կարևոր չէ՞ ինչու: Կարևորն այն է, որ նա անսպասելի զանգահարեց: Եվ մենք զրուցեցինք: Ճիշտ է՝ հեռախոսով: Բայց նույնիսկ հեռախոսով ես վաղուց որևէ

մեկի հետ այդպես չէի գրուցել: Եվ ինձ համար, ինձ համար... ինձ համար շատ կարևոր խոսակցություն էր: Կարևոր և լուրջ խոսակցություն, որ եղավ ճիշտ ժամանակին:

**Ծեր կին**- Հրաշալի է՝ «կարևոր խոսակցություն ճիշտ ժամանակին»: Դրանից լավ ի՞նչ կարող է լինել:

*Դադար:*

**Կատյա**- Ի դեպ նա ուր-որ է կգա:

**Ծեր կին**- Ի՞նչ-ի՞նչ: Ո՞վ: Անդրեյ՞ն: Այստե՞ղ: Հիմա՞:

**Կատյա**- Այո: Շատ շուտով: Ժամը քանի՞սն է

*Ծեր կինը նայում է ժամացույցին:*

**Ծեր կին**- Հինգից 12 րոպե է պակաս:

**Կատյա**- Ահա, 12 րոպեից կգա:

**Ծեր կին**- Անդրեյը կգա այստե՞ղ:

**Կատյա**- Այո, մենք պայմանավորվել ենք: Ես մտածեցի, թե մինչև հինգը այստեղ կմնամ, հետո նա կգա իմ ետևից ու մենք կգնանք ընթրելու:

*Մտնում է Բուժքույրը, աջ ձեռում ոչ հաստ թղթապանակ:*

**Բուժքույր**- Ներեցեք: Ցավում եմ կատարվածի համար: Եվ ես կուզեի...

**Կատյա**- Ներեցեք, կարո՞ղ եք քիչ ավելի ուշ գալ: Կես ժամից, լավ:

**Բուժքույր**- Այո, այո, իհարկե: Պարզապես պետք է, որ դուք ստորագրեք: Կարգն է այդպես...

**Կատյա**- Կարելի՞ է կես ժամից:

**Բուժքույր**- Նաև ուզում էի ասել...

**Ծեր կին**- Խնդրում ենք, ընդամենը կես ժամ թողեք, որ մենք խոսենք երկուսով: Հնարավո՞ր է:

**Բուժքույր**- Լավ: Ես ավելի ուշ կգամ: Ուզո՞ւմ եք ջուր բերեմ:

**Կատյա**- Ոչ, ոչ, պետք չէ:

**Ծեր կին**- Մեզ խոսել է պետք:

**Բուժքույր**- Ներեցեք:

*Բուժքույրը դուրս է գալիս:*

**Կատյա**-Այնպես որ, շուտով դուք նորից կհանդիպեք

**Շեր կին**- Աստված իմ, ո՞ւմ մտքով կանցներ:

**Կատյա**- Ինչքա՞ն ժամանակ չեք հանդիպել:

**Շեր կին**-Ուղիղ մեկ տարի: Իրականում մենք մի անգամ ենք հանդիպել, այն օրը Կիևում, երբ դու պարում էիր:

**Կատյա**- Ահա, արդեն մի քանի բուպեից այստեղ կլինի:

*Դադար:*

**Շեր կին**-Ներիր, որ խառնվում եմ անձնական կյանքիդ, բայց չեմ կարող չհարցնել...

**Կատյա**-Այո:

**Շեր կին**-Ի՞նչ է նա... սիրահարվա՞ծ է քեզ կարծես: Ինձ չի թվում, թե դա զուտ համակրանք է: Կարծում եմ՝ ավելի լուրջ է:

**Կատյա**- Աստված իմ: Ոչ: Ոչ: Իհարկե ոչ: Նա ամուսնացած է, սխալվում ես...

**Շեր կին**- Անդրեյն ամուսնացա՞ծ է: Իսկապե՞ս: Ամուսնացա՞ծ է:

**Կատյա**- Եվ նա երեխաներ ունի: Կարծեմ երկու երեխա: Եվ շատ լավ ընտանիք: Մեր հարաբերություններն ամենևին այդպիսին չեն: Աստված իմ: Դու կարծել ես, թե մեր միջև սիրավե՞պ կա:

**Շեր կին**- Դե, իհարկե: Ուղղակի վստահ եմ եղել: Իսկ ի՞նչ է, այդպես չէ: Ինձ ճիշտն ասա, դու ուղղակի թաքնվո՞ւմ ես: Հասկանում եմ, չե՞ որ նա ամուսնացած է:

**Կատյա**- Աստված իմ: Ոչ: Մի՞ թե դու այդքան հիմար ես: Ո՛չ: Այդքան հիմար չես:

**Շեր կին**-Վստահ եմ, կասկած չունեմ:

**Կատյա**-Ոչ:

**Շեր կին**-Պարզապես թաքցնում ես, վստահ եմ: Դու հիմա էլ այդպես ես քեզ պահում, որովհետև թաքցնում ես...

**Կատյա**-Դու հիմար ես, Տեր Աստված, ինչ հիմար ես: Հա-հա-հա:

*Կատյան ծիծաղում է:*

**Շեր կին** – Պահ-պահ, ծիծաղիդ չեմ հավատում: Պարզ տեսնում եմ, սուտ է:

**Կատյա** – Սուտ չէ, կասկածներդ, իրոք, ծիծաղելի են ...

**Ծեր կին** – Շատ վատ ես դերասանություն անում, ծիծաղդ իսկական չէ:

*Կատյայի ծիծաղը շարունակ ուժգնանում է. ծիծաղի նույա է:*

**Կատյա** – Էլ չեմ կարող քեզ լսել, խնդրում եմ, բավական է հիմարություններ ասես, ես հիմա ծիծաղից կմեռնեմ:

**Ծեր կին** – Այդ ծիծաղն ինձ վրա չի ազդում: Ես վերջնականապես համոզվեցի, որ սիրավեպ կա, և քո այդ ծիծաղը դրա ապացույցն է: Խոստովանի՛ր:

*Ծիծաղից մեռնում է:*

**Կատյա** – Վերջ տուր խնդրեմ:

**Ծեր կին** – Ծիծաղիդ մեջ ողբերգական անատողջ բան կա: Բռնվեցի՞ր:

**Կատյա** – Խնդրում եմ:

*Կատյան անդադար ծիծաղում է: Մտնում է Անդրեյը: Կանգ է առնում դռների մոտ և զարմացած նայում Կատյային:*

**Կատյա** – Մի զարմացիր, որ ծիծաղում եմ, երբ պատճառն իմանաս, ինքդ էլ կսկսես հռհռալ:

**Անդրեյ** – Ջուր բերե՛մ:

**Կատյա** – Պետք չէ. Սա հիստերիա չէ, ես իսկապես չեմ կարողանում զսպել ծիծաղս:

*Կատյան մի փոքր հանգստանում է: Անդրեյը մտնում է սենյակ, նստում է բազմոցին՝ Կատյայի կողքին:*

**Կատյա** – Երևի մտածեցիր, թե մորս մահվան պատճառով, հիստերիայի մեջ եմ ընկել: Ամեննին ոչ: Ինձ ծիծաղեցնողն այս կինն է: Դուք ծանոթ եք, հիշո՞ւմ ես նրան:

**Անդրեյ**-Իհարկե հիշում եմ, ծանոթացել ենք Կիևում:

**Ծեր կին** - Մենք էլ քիչ առաջ այդ օրն էինք հիշել:

**Կատյա**- Եվ նա վստահ է, թե մենք սիրելիաններ ենք:

**Անդրեյ**-Այո: Ծիծաղելի է:

**Ծեր կին**-Իրականում, դա իմ գործը չէ:

**Անդրեյ** – Իրականում, նման բան չկա:

**Կատյա**- Դա պարզապես անհնար է:

**Անդրեյ** – Չէ, տեսականորեն, իհարկե , հնարավոր է...

**Կատյա** – Դու երեխաներ ունես: Եվ բացի այդ, սիրում ես կնոջդ:

**Անդրեյ** – Երևի ճիշտ է: Բայց... բայց ով գիտե՞ ինչ է սերը:

*Երկար դադար*

**Օեր կին** – Իսկ ի՞նչ է սերը: Դուք գիտե՞ք:

*Դադար*

**Անդրեյ** – Ես գիտեմ է ինչ է եղել: Ալինան մահացել է: Ներքևում ասացին: Ցավակցում եմ: Ի՞նչ ասեմ՝ չգիտեմ:

**Օեր կին** – Ես էլ շատ կուզեի օգնել, բայց ինչպե՞ս, ինչո՞վ :

**Կատյա** – Տարօրինակ է՝ կես ժամ անցել է արդեն, իսկ ես չեմ զգում որևէ ողբերգական բան: Ես, ճիշտն ասած, բոլորովին այլ բան եմ զգում: Երբ քիչ առաջ ծիծաղում էի. այնքան ծիծաղելի էր: Ծիծաղում էի ու մտածում. «Ես նման եմ մի կնոջ, որ լսել է մոր մահվան լուրը և մոլագարի պես քրքջում է»: Ամենին: Ես, իրոք, ծիծաղում էի կատակի պատճառով: Նա մտածում էր, թե մենք սիրում ենք իրար: Ինչպիսի անհեթեթություն: Եվ ծիծաղելի: Եվ տարօրինակ: Չէ որ ես մորս շատ եմ սիրում: Սիրում էի: Մեր հարաբերություններն այնքան անկեղծ էին, մինչ այն պահը երբ նա երեկ վատացավ: Ես ոչինչ չեմ զգում: Ես, իսկապես, կատակի վրա էի ծիծաղում: Ճիշտ եմ ասում: Կատակի վրա: Իրոք: Այնքան ծիծաղելի է: Մտածել, թե ես ու Անդրեյը սիրային կապի մեջ ենք: Ինչ սիրավեպ: Տեր Աստված: Ծիծաղելի է:

*Դադար*

**Կատյա** – Այն օրը՝ Կիևում, ես նայում էի նրան և մտածում. « Աստված իմ, այդ նա է »... Մտածում էի՝ նա է: Այո, Անդրեյ... երբ սկսեցի պարել , զգացի՝ Դու ես: Պարել սկսեցի սովորականի պես՝ բոլորի համար: Սկզբում: Հետո... չկարծեք թե չափազանցում եմ, հանկարծ, սիրտս ասաց՝ «նա է»: Ինչպես գրականության մեջ են հաճախ օգտագործում՝ «սիրտը նրան շնչաց», այդպես իմ սիրտն ինձ շնչաց՝ նա է: Ճիշտ ինչպես գրականության մեջ է նկարագրվում: Սիրտս շնչաց ինձ, շնչաց երբ պարում էի: Գիտեք՝ պարն ինձ համար ամեն ինչ է: Իմ պարն իմ իմաստն է ու ճշմարտությունը: Եվ ահա պարելիս ես լսեցի սրտիս ձայնը: Եվ սիրտս ինձ ասաց. «Նա է»:

*Կատյան բռնում է Անդրեյի ձեռքը: Նայում է աչքերի մեջ:*

**Կատյա** – Դու ես: Սիրում եմ քեզ, Անդրեյ: Ես պատրաստվում էի այսօր ասել քեզ և ահա ասացի:

*Անդրեյն լուռ նայում է Կատյային: Օեր կինը շրջվել է նրանցից և լայիս է: Մտնում է բուժքույրը:*

**Բուժքույր** – Խնդրում եմ ներքեք ինձ: Հասկանում եմ, որ մեծ է ձեր վիշտը: Բայց մենք պետք է օգնեք ձեզ: Եվ որպեսզի կարողանանք ձեզ օգնել, պետք է ստորագրեք այս փաստաթղթերը՝ նախ որ դուք հրաժարվում եք դիախեռձումից ու մի քանի ուրիշ փաստաթղթեր: Ձեր ստորագրելուց հետո միայն մարմինը կտեղափոխվի դիախեռձարան: Պետք է ստորագրեք:

*Բուժքույրը մեկնում է թղթերը Կատյային: Կատյան կարդում է: Ստորագրում առաջինը, հետո՝ երկրորդը: Հետո նայում Անդրեյին, Անդրեյը նայում է նրան: Կատյան նորից ստորագրում է: Ծեր կինը անկյունում նստած լաց է լինում: Կատյան ստորագրում է թղթերը:*

*Վարագույրը փակվում է: Դերակատարները դուրս են գալիս առաջնաբեմ, խոնարհվում հանդիսատեսին:*

## Պիես № 2

### ՊԱՐԻ ՄԵՋ

Գործող անձինք՝

**Կատյա**

**Ծեր կին**

**Անդրեյ**

**Բուժքույր**

*Վարագույրը բացվում է: Քաղաքային հիվանդանոցի առանձնասենյակ այցելուների համար: Սենյակում՝ բազմոց և երկու բազկաթոռ: Պատին մեծ հայելի կա: Սենյակում Կատյան և Անդրեյն են:*

**Կատյա**-Դու այդպես էլ չպատասխանեցիր: Ներիր, բայց կարծում եմ՝ ինչ-որ բան պետք է ասես:

**Անդրեյ**-Այո, ճիշտ ես: Բայց կարծում եմ հարմար պահը չէ:

**Կատյա**- Հասկացիր, Անդրեյ, ինձ համար հեշտ չէր: Չէ որ կին լինելով առաջինը ես սեր խոստովանեցի:

**Անդրեյ**- Հասկանում եմ... Բայց... գուցե... գնանք մի տեղ նստենք, ընթրենք, զրուցենք... թե՞ ուզում ես այստեղ... հիմա..

**Կատյա**-Հիմա և այստեղ:



**Անդրեյ-Լավ**, ինչպես կուզես:

*Երկարատև դադար:*

**Կատյա-** Հասկացա: Դու ինձ չես սիրում:

**Անդրեյ-Ներիր:**

*Դադար:*

Քո պարն ինձ հիացնում է, կախարդում է: Երբ նայում եմ՝ ինչպես ես պարում, զգում եմ, որ ես, դու, Աստված, բնությունը մի ամբողջություն ենք: Բայց դա այն սերը չէ, որ զգում եմ կնոջս հանդեպ: Ես սիրում եմ կնոջս: Ուզում եմ ապրել և մեռնել նրա կողքին, ներիր:

*Դադար:*

**Կատյա-** Այնպիսի ցավ եմ զգում:

**Անդրեյ-Ի՞նչ անենք:**

**Կատյա-** Ի՞նչ կարող ենք անել...

*Դադար:*

Հիմար բան ստացվեց... Ես վստահ էի, թե սերս փոխադարձ է: Կասկած չունեի... Արի ու տես, որ սխալվել եմ: Այդ սխալիս պատճառով սիրտս կտոր-կտոր է լինում:

*Դադար:*

**Կատյա-** Ուժեղ ցավ եմ զգում:

**Անդրեյ-** Ի՞նչ կարող եմ քեզ համար անել:

**Կատյա-** Ոչինչ: Արի պայմանավորվենք չհանդիպել.. որոշ ժամանակ:

**Անդրեյ-Ի**հարկե, ինչպես կասես: Բայց ես կկարոտեմ քեզ ու քո պարը:

**Կատյա-Ինչ** արած: Եվ իմ ելույթներին, խնդրում եմ չգաս, համենայն դեպս՝ որոշ ժամանակ: Չգաս... պետք չէ...

**Անդրեյ-Չ**էի ուզենա վշտացնել քեզ: Հավատա, շուտով կանցնի: Դա ընդամենը, զգացմունք է, իսկ զգացմունքներն անցնում են: Բոլոր զգացմունքները անցնում-գնում են: Ժամանակ է պետք: Դիմացիր և ժամանակը կջնջի այդ սերը քո սրտից:

**Կատյա-** Երևի դու սրտի մասին ոչինչ չգիտես, չգիտես, որ սերը և սիրտը նույնն են... Ով սեր չունի, սիրտ էլ չունի: Սիրտն ու սերը ամբողջություն են, դու չգիտե՞ս: Ափսոս, որ չգիտես, շատ ափսոս:

**Անդրեյ-** Ես սեր ունեմ, Կատյա: Եվ իմ սերը իմ սրտում է: Բայց այդ սերը ուրիշ կնոջ հանդեպ է: Ես ուրիշ կնոջ եմ սիրում, Կատյա: Ներիր, ինքդ ստիպեցիր, որ այս բառերն ասեմ: Ներիր:

*Անդրեյը վեր է կենում ու դուրս գնում: Կատյան նստած է, նրա ծոծրակը և մեջքը արտացոլվում են մեծ հայելու մեջ: Դադար: Կատյան գնում է իրեն հայելու մեջ: Ներս է մտնում Ծեր կինը:*

**Ծեր կին-** Կատյա ...ցավոք, ամեն ինչ վատ է... մայրդ մահացավ:

**Կատյա-** Ֆրիդ: Անսովոր զգացում է: Անգամ չգիտես՝ ինչպես արձագանքել:

**Ծեր կին-** Կուզեի քեզ օգնել, բայց ինչն՞ վ: Ես քեզ հետ եմ, դու հասկանում ես, գիտես: Բայց ի՞նչ անել:

**Կատյա-** Տարօրինակ է: Լուրը սարսափելի է, իսկ ես ոչինչ չեմ զգում՝ ոչ վախ, ոչ ցավ: Դու ասացիր, ես լսեցի, ես հասկացա, որ մայրս մահացել է: Իսկ ի՞նչ անեմ: Չգիտեմ՝ ինչպե՞ս արձագանքել: Հավանաբար ես պետք է լաց լինեմ, բայց լացս չի գալիս: Ինչ-որ տարօրինակ զգացում է: Ես ոչինչ չեմ զգում:

**Ծեր կին-** Ես էլ շատ անսովոր զգացում ունեմ: Վիշտդ այնքան մեծ է, բայց ինչն՞ վ կարող եմ քեզ օգնել: Քեզ հետ եմ: Բայց ի՞նչ անել:

**Կատյա-** Չգիտեմ՝ ինչ անել: Ինչ-որ տարօրինակ զգացում է: Ավելի ճիշտ՝ զգացում չէ, այլ՝ հակազգացում: Ես զգում եմ... ոչինչ: Հավանաբար սա կոչվում է շոկ: Ի՞նչ ես կարծում, սա շոկ է, չէ՞: Այսպիսի տարօրինակ, ոչ աղեկվատ վարքը երևի հենց շոկային վիճակ է որ կա: Մայրս մահացել է, իսկ ես ոչինչ չեմ զգում: Հետաքրքիր արձագանք է, չէ՞:

**Ծեր կին-** Չգիտեմ: Միակ ցանկությունս քեզ օգնելն է: Բայց ինչպե՞ս: Ի՞նչ կարող եմ անել: Ես քեզ հետ եմ: Քեզ հետ եմ: Գուցե, քեզ խմե՞լ է պետք: Արի գնամ խանութ, խմելու քան բերեմ:

**Կատյա-** Ինչի՞ համար: Առավել ևս, որ պետք է խանութ հասնես: Ոչ, կարիք չկա:

**Ծեր կին-** Որ խմես՝ կթեթևանաս: Հավատա: Գնամ վիսկի գնեմ ու գամ:

**Կատյա-** Ոչ, շնորհակալ եմ պետք չէ: Ես վատ չեմ: Անհեթեթ է: Ես ամենևին էլ վատ չեմ: Այնինչ, պետք է հակառակը լիներ, չէ՞: Ես պետք է շատ-շատ վատ լինեի, չէ՞: Նրան, ում հայտնում են, որ իր մայրը մահացել է, պետք է իրեն շատ վատ զգա, չէ՞: Իսկ ես հեջ, վատ չեմ: Ես ամենևին որևէ քան չեմ զգում: Դու հիշո՞ւմ ես իմ և Անդրեյի հանդիպումը մեկ տարի առաջ: Կիևում: Հիշո՞ւմ ես:

**Ծեր կին**- Իհարկե: Շատ լավ հիշում եմ: Եվ այն ռեստորանն եմ հիշում, և թե ինչպես էիր պարում... պարում էիր բոլորիս համար: Անդրեյը հաճելի և անկեղծ մարդ է: Նրան կարելի է վստահել, չէ՞:

**Կատյա**- Ճիշտ է: Անդրեյը վստահելի է և նա սուրբ է: Սուրբ չէ, բայց համարյա սուրբ է: Համենայն դեպս նա երբեք չի ստում: Դժվար է հավատալ, բայց այդպես է: Ես գիտեմ, որ նա մի մարդ է, որ երբեք չի ստում:

**Ծեր կին**- Այո, նա բացառիկ է: Եվ այն, թե ինչպես էր նայում քեզ, երբ պարում էիր: Գիտե՞ս, ինձ համար շատ կարևոր է, թե ինչպես է մարդը նայում պարը: Երկար տարիներ է զննում եմ, թե ինչպես են մարդիկ դիտում պարը: Չէ որ ինքս հաճախ եմ դիտում պարեր: Եվ գիտե՞ս, չեմ դիմանում՝ հետևում եմ հանդիսատեսին, թե ով ինչպես է նայում: Եվ որոշակի համոզմունք ունեմ: Ես վստահ եմ, որ պարը պետք է ոչ թե նայել այլ լսել: Լսել ոչ թե ականջներով, այլ ամբողջ էությանմբ: Պետք է... ո՞նց ասեմ... պետք է պարողի հետ դառնալ մեկ, պետք է թույլ տալ, որ նրա պարը թափանցի քո մեջ, պետք տրվել, պարը պետք է տիրի քեզ: Եվ այդ ժամանակ է, որ դու և պարողը դառնում եք մեկ ամբողջություն, դառնում եք մեկ պար: Եվ այլևս լինում է ոչ թե պարող և դիտող, այլ միայն պար, ուրիշ ոչինչ: Բայց այդպես նայում են քչերը:

*Դադար:*

**Կատյա**-Նա հենց այդպես էր նայում:

**Ծեր կին**-Այո, նա ճիշտ էր նայում: Երբեմն շեղվում էր, բայց կարծում եմ, պատճառն այն էր, որ նա ցնցված էր:

*Դադար:*

**Ծեր կին** – Անդրեյ:

*Դադար:*

**Ծեր կին** - Իհարկե, հիշում եմ:

*Դադար :*

**Կատյա**- Ջարմանալի է, որ դուք չհանդիպեցիք:

**Ծեր կին** - Չհանդիպեցի՞նք: Որտե՞ղ կարող էինք հանդիպել, Կատյա:

**Կատյա**- Նա այստեղ էր, բառացիորեն հինգ բուպե առաջ:

**Ծեր կին** - Ի՞նչ... Ի՞նչ... Ի՞նչ ես ասում: Անդրե՞յը: Որտե՞ղ: Այստե՞ղ

**Կատյա**-Այո, նա եկել էր: Ես էի խնդրել, որ գա: Շատ կարևոր բան ունեի նրան ասելու, ինքս այստեղից դուրս գալ չէի կարող, քանի որ մայրիկն ավելի էր վատացել:

*Ներս է մտնում բուժքույրը: Աջ ձեռքում փոքրիկ թղթապանակ կա:*

**Բուժքույր-** Ներեցեք: Ցավում եմ կատարվածի համար: Ես ուզում էի...

**Կատյա-** Ներեցեք, կարո՞ղ եք քիչ ավելի ուշ գալ: Կես ժամից, լա՞վ:

**Բուժքույր-**Այո, այո, իհարկե: Պարզապես պետք է, որ դուք ստորագրեք, կարգն այդպես է, դուք պետք է...

**Կատյա-** Կարելի՞ է կես ժամից:

**Բուժքույր-** Նաև ուզում էի ասել, որ...

**Շեր կին-** Խնդրում ենք, ընդամենը կես ժամ թողեք, որ մենք խոսենք երկուսով: Հնարավո՞ր է:

**Բուժքույր-** Լավ, ես ավելի ուշ կգամ... Ուզո՞ւմ եք ջուր բերեմ:

**Կատյա-** Չէ, չէ, ոչինչ պետք չէ:

**Շեր կին-**Մենզ խոսել է պետք:

**Բուժքույր-**Ներեցեք:

*Բուժքույրը դուրս է գալիս*

**Կատյա-**Իմ պարը միշտ իմ սրտից է ծնվում:

*Դադար:*

**Շեր կին** -Գիտեմ, որ մայրդ երեխա ժամանակ երազել է պարուհի դառնալ, դրա համար էլ նա սիրում էր քո պարը: Հիմա մայրդ պարում է քեզ հետ միասին, հիմա պարում է քո սրտում: Հիմա, դուք երկուսով մեկ պար եք պարում:

**Կատյա-** Հավանաբար դու ճիշտ ես, բայց ես, դեռ որևէ բան չեմ զգում, երևի պետք է ժամանակ անցնի, որպեսզի կարողանամ հասկանալ կատարվածը:

**Շեր կին** -Քո մայրը, Կատյա, կարողացավ փոխանցել քեզ մի զարմանալի շնորհ՝ սեփական սիրտը խորապես զգալու կարողությունը: Որովհետև, Կատյա, պարը ծնվում է հենց սրտիցդ: Դա է գլխավորը: Իսկ սիրտը, երևի, հենց Աստվածն է կամ բնությունը: Կարևոր չէ, թե ինչպես է կոչվում, կարևորն էությունն է:

*Ներս է մտնում Անդրեյը:*

**Անդրեյ-**Ես իմացա, որ Ալինան մահացել է... ներքևում ասացին և ես որոշեցի վերադառնալ... Ցավակցում եմ... Չգիտեմ՝ ինչ ասել:

**Շեր կին-** Բարի օր Անդրեյ. մենք ծանոթ ենք, հիշո՞ւմ եք:

**Անդրեյ-** Իհարկե, շատ լավ հիշում եմ: Կհնում ենք ծանոթացել:

**Ծեր կին** - Կատյան պարում էր, և դա այնքան գեղեցիկ էր: Լավ հիշում եմ, թե ինչպես էիք նայում նրան, Անդրեյ:

**Անդրեյ-** Կատյա, ասածներս սուտ էին սկզբից մինչև վերջ: Ես պարզապես վախեցա: Պարզապես վախեցա հետևանքներից: Վախեցա պատասխանատվությունից: Ես սովոր եմ մտածել, թե ամեն բան իմ ուսերին է, ողջ երկրագունդն իմ ուսերին է: Ինձ միշտ թվում է, թե ես ամեն ինչ վերահսկում եմ: Կարծում եմ, թե կինս ու երեխաներս առանց ինձ չեն կարողանա ապրել... ինքնակարևորման մոլուցք է: Ճշմարտությունն այն է, որ ես պարզապես վախկոտ եմ: Վախկոտ եմ, Կատյա: Եվ ես ստեցի քեզ, որովհետև սիրում եմ քեզ: Վաղուց ես դու իմ մեջ: Բայց չեմ համարձակվել խոստովանել ինքս ինձ: Պատասխանատվության զգացումն է խանգառում: Ես հաստատ որոշել էի ստել, բայց երբ իմացա, որ մայրդ մահացել է, մտածեցի, որ վիշտդ անսահման է, իսկ ուրախությունդ ոչ մի կաթիլ: Ուզում եմ քեզ նվիրել մեր ուրախությունը, որին արժանի ենք երկուսս էլ: Էլ չեմ ուզում ապրել՝ ստելով քեզ, ինձ, ուրիշներին, չեմ ուզում այլևս լինել էգոիստ, չեմ ուզում բարդույթների ու ստի մեջ թաղված մնալ: Սիրում եմ քեզ:

*Կատյան վեր է կենում, մոտենում Անդրեյին, գրկում նրան: Նրանք նստում են բազմոցին՝ միմյանց հպված: Ծեր կինը շրջվել է նրանցից և լաց է լինում: Մտնում է բուժքույրը:*

**Բուժքույր** – Խնդրում եմ ներք ինձ: Հասկանում եմ, որ մեծ է ձեր վիշտը: Բայց մենք պետք է օգնեք ձեզ: Եվ որպեսզի կարողանանք ձեզ օգնել, պետք է ստորագրեք այս փաստաթղթերը՝ նախ, որ դուք հրաժարվում եք դիախեթումից ու մի քանի ուրիշ փաստաթղթեր: Ձեր ստորագրելուց հետո միայն մարմինը կտեղափոխվի դիախեթարան: Պետք է ստորագրեք:

*Բուժքույրը մեկնում է թղթերը Կատյային: Կատյան կարդում է : Ստորագրում առաջին թերթը, հետո՝ երկրորդը: Հետո նայում է Անդրեյին, Անդրեյը նայում է նրան, Կատյան նորից ստորագրում է թղթերը: Ծեր կինը անկյունում նստած լաց է լինում : Կատյան շարունակում է ստորագրել:*

*Վարագույրը փակվում է, դերակատարները դուրս են գալիս առաջնաբեմ, խոնարհվում հանդիսատեսին:*

### Պիես № 3

### Զգում ես որպես

*Գործող անձինք՝*

**Կատյա**

**Ալինա**

**Ծեր կին**

**Բուժքույր**

*Վարագույրը բացվում է: Քաղաքային հիվանդանոցի առանձնասենյակ այցելուների համար: Մենյակում չորս հյուսկեն բազկաթոռ, ապակյա փոքրիկ սեղան, վրան՝ մի քանի ամսագիր: Պատին հայտնի ինչ-որ կտավի փազլային կրկնօրինակ:*

*Մենյակում Կատյան և Ալինան են:*

*Դադար:*

**Կատյա** - Մայրիկ, իմ և Անդրեյի միջև լուրջ խոսակցություն եղավ, ես նրան ամեն ինչ խոստովանեց: Ասացի, որ սիրում եմ:

*Դադար:*

**Ալինա**- Զգում էի, որ մի օր ասելու ես... և նա ի՞նչ պատասխանեց:

**Կատյա**- Նա երկար լուռ էր: Լռեց-լռեց, իսկ հետո... հետո ասաց, որ սիրում է իր կնոջն ու գնաց:

**Ալինա** - Տխուր է... երևի շատ ես տանջվում:

**Կատյա** - Աշխարհը մեկ վայրկյանում փլվեց: Ես անասելի ցավ էի զգում:

**Ալինա** - Իմ խեղճ աղջիկ, ինչ մեղկ ես, ի՞նչ անեմ քեզ համար...

**Կատյա**-Ինձ համար կարևոր է, որ ինձ լսես ու հասկանաս:

**Ալինա** – Հա, ցավոք, դա միակ բանն է, որ հիմա կարող եմ անել քեզ համար՝ լսել և հասկանալ:

**Կատյա**-Նաև ընդունել, մամ: Ընդունել իմ կյանքը և կյանքիս բոլոր իրադարձություններն այնպիսին, ինչպիսին կան: Ինձ համար շատ կարևոր է, մամ:

**Ալինա** - Ես միշտ փորձել եմ ընդունել: Ամբողջ մեր համատեղ կյանքի ընթացքում:

**Կատյա** – Ինչն էլ ինձ համար շատ կարևոր է, մամ, ահա թե ինչու եմ ուզում պատմել քեզ ամբողջը: Մա երկրորդ և ամենակարևոր իրադարձությունն է իմ կյանքում:

Առաջինը, որ դու ստիպված եղար ընդունել, իմ պարն էր: Ճիշտ է, դու սկզբում չընդունեցիր այն, հիվանդացար նույնիսկ:

**Ալինա** - Բայց, ընդունել եմ և պետք չէ հիշել: Իսկ ինչ վերաբերում է քո այսօրվա վշտին, ես ոչ միայն ընդունում եմ, այլև ջանում եմ, ազնիվ խոսք, ջանում եմ ամբողջ սրտով վերապրել քեզ հետ քո ցավը, ուզում եմ, որ իմ սիրտն էլ վշտից պայթի ինչպես քոնը, ուզում եմ զգալ նույնը ինչ դու:

**Կատյա** – Ահա թե ինչու եմ որոշել եմ ամեն ինչ, մանրամասն պատմել քեզ, որ հասկանաս՝ ինչ էր կատարվում ինձ հետ: Սկզբում աննկարագրելի ցավ էր: Նույնքան ուժգին ցավ, որքան այն ժամանակ Դելիում, երբ պարս էր ծնվում: Ցավ էր ասես, սիրտս շիկացած երկաթով այրում էին: Սա էր սկիզբը:

**Ալինա** – Աստված իմ, ոնց եմ խղճում քեզ:

*Դադար:*

**Կատյա** - Հետո Անդրեյը վերադարձավ: Եվ ասաց, որ ստել է, որ ընդհանուր թուլություն է եղել, որ վախեցել է դավաճանել կնոջն ու երեխաներին: Հետո է հասկացել, որ ճշմարտությունն ասելը դավաճանությունն չէ, ստելն է դավաճանություն: Իսկ իր կնոջը նա ստում է վաղուց, որովհետև սիրում է ինձ: Նա ասաց, որ ինձ է սիրում: Նա ինձ սիրում է, մամ: Մենք երջանիկ ենք: Ես երջանիկ եմ, մամ: Ճիշտ ինչպես այն ժամանակ, երբ իմ «Դելի» պարը ձևավորվեց: Ամեն ինչ այն ժամանակվա պես է՝ ճիշտ նույնը: Նախ՝ անասելի ցավ, հետո՝ անսահման ուրախություն: Այդպիսի բաներ են ինձ հետ կատարվել: Հիմա դու ամեն ինչ գիտես: Խնդրում եմ, որ ընդունես, մամ:

*Դադար:*

**Ալինա** - Այո, ամեն ինչ նույնն է, ինչպես այն ժամանակ:

**Կատյա** - Այո, ինչպես այն ժամանակ:

**Ալինա** – Այո:

*Դադար:*

**Կատյա**- Ինչպես և այն ժամանակ, հիմա էլ խնդրում եմ, որ ընդունես: Ինձ համար ամենակարևորը, որ դու ընդունես:

*Դադար:*

**Ալինա** - Ձեր հարաբերությունները դժբախտ են լինելու: Անդրեյն ունի կին, երեխաներ: Դժբախտ պատմություն, դժբախտ սեր:

*Դադար:*

Իսկ դժբախտ սերը չի կարող իսկական լինել:

Սերը չի կարող լինել դժբախտություն, դժբախտությունը չի կարող լինել սեր:

*Դադար:*

**Կատյա** - Չգիտեմ ինչու, վստահ էի, որ այսպես ես արձագանքելու... ես պատրաստ էի սրան:

*Դադար:*

**Կատյա** - Ես միշտ էլ քեզ համար եղել եմ ոչ թե պարզապես քո երեխան, այլ՝ դժբախտություններիդ ընկերը, դու ինձ մեծացնում էիր, որպես ընկեր քո դժբախտություններին: Դու երկու երազանք ունեիր՝ պար և սեր... երկուսն էլ անկատար մնացին... այդ անկատարությունը քեզ դժբախտ դարձրեց: Երազում էիր հռչակավոր պարուհի դառնալ՝ չդարձար: Մեծ, իսկական սեր էիր երազում՝ չունեցար... Ուզում էիր դժբախտ օրերդ ընկերուհի ունենալ... և որոշեցիր քո աղջկան դարձնել: Ի դժբախտություն քեզ, աղջիկիդ մեծացավ, մեծ պարուհի դարձավ, ունեցավ մեծ սեր... Ահա, թե ինչը դու չես կարող ընդունել... Միայն հիմա վերջնականապես հասկացա: Չնայած, կասկածներ նախկինում էլ ունեցել եմ... Մի քանի տարի առաջ ես առաջին անգամ ցույց տվեցի քեզ իմ «Դեյլի» պարը... և քո աչքերում ոչ թե ուրախություն տեսա, այլ՝ ցասում: Դա նախանձ էր, հետո, երբ իբր ընդունեցիր, մտածեցի, թե սխալվել եմ, թե դու պարզապես տարօրինակ ձևով արձագանքեցիր իմ տարօրինակ պարին... Սակայն, հիմա ամենին չեմ կասկածում՝ դու նախանձ էիր զգում, որովհետև հիմա ամեն ինչ նույնությամբ կրկնվեց: Դու չես կարող ընդունել իմ երջանկությունը, երջանկության մասին ճշմարտությունը քեզ պետք չէ: Դու չես ուզում լսել, չես ուզում թույլ տալ, որ ճշմարտությունը լսվի, իսկ այն, միևնույն է, հնչում է ամեն կողմից... Ուրեմն, մեկ էլ լսիր մայրիկ՝ երջանկություն կա: Այն է՝ պարի քո պարը, սիրի քո սրան ով քոնն է: Երջանկությունը սա է:

*Դադար:*

**Ալինա** - Այո, ամեն ինչ նույնն է, այն ժամանակվա պես:

**Կատյա** - Նույնն է, ինչ այն ժամանակ...



*Մտնում է բուժքույրը:*

**Բուժքույր** - Ներեցեք, որ ընդհատում եմ: Ալինա, դուք պետք է հիվանդասենյակ վերադառնաք. հինգ բուժքույրը քիչ է գալու, նա ուզում է գննել ձեզ:

**Ալինա** - Այո, այո, հիմա կգամ, լա՛վ: Երկու բուժքույր մենք կավարտենք մեր զրույցը:

**Բուժքույր** - Ես հիվանդասենյակում ձեզ եմ սպասում:

*Բուժքույրը դուրս է գալիս:*

**Ալինա** – Իսկ հիմա, ես կասեմ քեզ ճշմարտությունը: Եվ իմ ճշմարտությունը նույնքան կարճ է, որքան՝ քոնը: Ահա այն: Ինձ, բարկացնում է, ոչ թե պարո, այլ բովանդակությունը պարիդ: Դու գովերգում ես ողբը, ապականությունը, վիշտը... մարդկային ցավը դու կոչում ես երջանկություն ու երջանիկ ես դրանով: Վիշտը երջանկություն չի դառնում, բայց դու ես երջանիկ դառնում: Եվ դա է ինձ կատաղեցնում: Դու ցանկալին ներկայացնում ես որպես իրականություն: Դու վերցնում ես Դելիում ապրող աղքատ հիվանդ, այլանդակված, հաշմանդամ մարդկանց դժբախտ կյանքը ստեղծում գեղեցիկ, նրբագեղ պար... պար, որով հիացնում ես բոլորին, դառնում ես հանրաճանաչ... Հանրաճանաչ ես դառնում, գովերգելով մարդկանց տառապանքը... Դու պարում ես և դառնում հոշակավոր, իսկ նրանք, ում մասին պարում ես, մեռնում են չքավորությունից ու հիվանդություններից: Ուրիշների վիշտը ցույց տալով, դու երջանիկ ես դառնում՝ սա է, որ ես չեմ ընդունում: Նույն կերպ Անդրեյի հետ ես վարվում՝ սիրում ես նրան, ով դավաճանել է իր ընտանիքը, նրան, ով ուրիշներին դժբախտություն է պատճառել: Դուք երջանիկ եք, իսկ նրա կինն ու երեխաները՝ արդեն ոչ: Դուք երջանիկ եք ուրիշների դժբախտության գնով: Սա է քո հիմնական գիծը, որին դեմ եմ: Ու ես դժբախտ եմ, ոչ այն պատճառով, որ դու երջանիկ ես, ոչ էլ այն պատճառով, որ ստամոքսի քաղցկեղ ունեմ, չնայած դրանից էլ, ողջ կյանքը համատարած-մշտական դժբախտություն է: Այդպես եմ տեսնում, այդպես էլ կա: Այո, կյանքը համատարած վիշտ է: Եվ ես միշտ եմ այդպես մտածել, հիվանդությունս ախտորոշվելուց առաջ էլ:

**Կատյա** - Քեզ հաջող վիրահատել են, դու այլևս քաղցկեղ չունես և գիտես այդ մասին: Նորից ամեն ինչ խճճում ես:

**Ալինա** - Կյանքիս վերաբերյալ պատրանքներ մի ստեղծիր: Ես չեմ կարող դառնալ ավելի դժբախտ, քան՝ կամ: Կյանքը դժբախտություն է ինքնին, ոչ թե ինչ-որ բանի պատճառով: Բայց ես կյանքում ամենաշատը ինձ կատաղեցնում է քո դիրքորոշումը, որ անգամ սեփական մորդ դժբախտությունը հնարավորություն է, որ դրսևորվի քո

երջանկությունը: Չեմ զարմանա, եթե իմ մահից հետո պար ստեղծես ու անվանես այն «մորս դժբախտությունը»... Դու այդպիսին ես՝ երջանիկ ես ուրիշների հաշվին... և սա, ներիր, ես չեմ կարող ընդունել... Եվ խնդրում եմ մեր խոսակցությունն այս թեմայով ավարտված համարիր... մեկընդմիջտ:

*Այլինան կանգնում է և քայլում դեպի դուռը:*

**Կատյա** - Երջանկություն կա, մայրիկ, հույս ունեմ՝ մի օր կգիտակցես:

*Այլինան կանգ է առնում դռան մոտ:*

**Ալինա** - Կյանքը տառապանք է աղջիկս, մաղթում եմ, որ հնարավորինս շուտ համոզվես:

*Այլինան դուրս է գալիս: Կատյան նստած է: Ներս է մտնում ծեր կինը:*

**Ծեր կեր** - Կատյա, ցավոք, ամեն ինչ շատ վատ է... Անդրեյի կինը՝ Օլգան ինքնասպան է եղել: Ինչ-որ դեղ է խմել ու մահացել: Անդրեյն ու երեխաները տանը չեն եղել, զբոսնելիս են եղել... Անդրեյն ինքը զանգահարեց ինձ, նա այնպիսի վիճակում էր, կարգին չկարողացավ որևէ բան բացատրել: Ասաց, որ առաջինը քեզ է զանգահարել, բայց հեռախոսդ անջատված է եղել, որովհետև դու հիվանդանոցում ես՝ մորդ մոտ: Եվ ես որոշեցի գալ այստեղ: Դիմացիր Կատյա:

**Կատյա** - Փրհ.. Տարօրինակ զգացում է... չգիտես՝ ինչպես արձագանքել:

**Ծեր կին** - Ես ինքս կուզեի քեզ օգնել, բայց ինչն՞ վ: Ես քեզ հետ եմ, դու հասկանում ես, գիտես, բայց ինչ անել:

**Կատյա** - Այո, տարօրինակ է: Թվում է՝ լուրը սարսափելի է, բայց ես սարսափ չեմ զգում: Ամենին որևէ չեմ զգում: Ես լսեցի և հասկացա՝ ինչ ասեցիր, այո: Ես իմացա, որ իմ պատճառով մարդ է մահացել, բայց ի՞նչ անեմ: Անգամ չգիտեմ, թե ինչպես արձագանքեմ: Երևի պետք է լաց լինեմ: Բայց լացս չի գալիս: Մի տեսակ տարօրինակ զացում է: Ոչինչ չեմ զգում:

**Ծեր կին** - Ես էլ շատ տարօրինակ զգացում ունեմ: Վիշտո՞ղ մեծ է: Բայց ի՞նչ անեմ: Ինչն՞ վ օգնեմ: Ես քեզ հետ եմ: Բայց ի՞նչ անել:

**Կատյա** - Չգիտեմ... ինչ անել: Տարօրինակ զգացում է: Ավելի ճիշտ՝ զգացում չէ, այլ՝ հակազգացում: Ես զգում եմ ոչինչ: Հավանաբար սա կոչվում է շոկ, ի՞նչ ես կարծում, սա շոկ է, չէ՞: Այսպիսի տարօրինակ, ոչ աղեկվատ վարքը երևի հենց շոկային վիճակ է

որ կա: Իմ պատճառով մարդ է մահացել, բայց ես ոչինչ չեմ զգում: Հետաքրքիր արձագանք է չէ՞:

**Օեր կին-** Չգիտեմ: Գուցե քեզ խմե՞լ է պետք: Արի գնամ խանութ, խմելու բան բերեմ:

**Կատյա-** Ինչի՞ համար: Հատկապես, որ պետք է խանութ հասնես: Ոչ, կարիք չկա:

**Օեր կին-** Որ խմես՝ կթեթևանաս: Հավատա: Գնամ վիսկի գնեմ ու գամ:

**Կատյա** - Ոչ, շնորհակալ եմ, պետք չէ, ես լավ եմ, տարօրինակ է՝ ամենևին վատ չեմ, բայց պետք է, որ հակառակը լինեք, չէ՞, ես պետք է շատ-շատ վատ զգայի, չէ՞: Ում հայտնում են, որ իր պատճառով մարդ է մահացել, պետք է իրեն շատ վատ զգա, չէ՞: Իսկ ես՝ հեչ, վատ չեմ զգում: Ամենևին որևէ բան չեմ զգում: Դու հիշո՞ւմ ես այն երեկոն Կիևում, երբ ես առաջին անգամ կատարեցի «Դելի» պարը՝ քեզ համար, մայրիկի համար, Անդրեյն էլ էր այնտեղ:

**Օեր կին** - Հարցո՞ւմ եմ: Մի՞թե հնարավոր է մոռանալ: Մոռանա՞մ: Այն միշտ կմնա, որպես կյանքիս ամենակարևոր իրադարձություն: Ես ցնցված էի: Այդ օրը ես հասկացա, թե ինչ է պարը: Որն է իմաստը պարի, էությունը: Ես հասկացա, որ ամեն բան ինչ շրջապատում է մեզ՝ պար է, որ մենք բոլորս շրջապատյալի մեջ պարում ենք ինպես պարողներ: Միայն պետք է կարողանալ դա տեսնել, այդ պարը տեսնել: Եվ ես տեսա, քո շնորհիվ տեսա, քո «Դելի» պարի շնորհիվ տեսա: Ես պարողն եմ: Ես պարն եմ: Ես պարի ավարտն եմ:

*Դադար:*

**Կատյա** - Հիշո՞ւմ ես մորս առաջին արձագանքը, հիշո՞ւմ ես՝ ինչպես էր բղավում ինձ վրա:

**Օեր կին** - Որովհետև նա ցնցված էր: Բայց հետո այնուամենայնիվ նա ընդունեց քո պարը:

**Կատյա**- Մի քանի տարի անց: Մենք 2 տարի չէինք խոսում, հաշտվեցինք վերջերս, երբ քաղցկեղը հայտնաբերվեց, երևի մտածեց, թե կմեռնի ու ասաց, թե ընդունում է ինձ... Նա ասաց, որ ընդունում իմ պարը... ոչ որպես «պար երջանկության», այլ «պար երջանիկ դժբախտության»... Ի դեպ, մեր հաշտեցումից անմիջապես հետո նրան հաջողությամբ վիրահատեցին... և նա հանգիստ ապրում է... Մենք հաշտվեցինք: Բայց իմ և Անդրեյի սերը նա ոչ մի դեպքում չի ընդունի: Ոչինչ չի կարող ստիպել նրան... գուցե մահը միայն... Այնպես որ, այսօր ես և մայրս ընդմիշտ բաժանվեցինք...

**Օեր կին** - Իսկ բժիշկը քեզ ի՞նչ ասաց:

**Կատյա** - Բժիշկը ասում է, որ նա երկու ամսից ավել չի ապրի: Երեկ պարզվեց, հետազոտության պատասխանը ստանալուց հետո: Ես նրան դեռ ոչինչ չեմ ասել: Առանց այդ էլ ամբողջ կյանքում տանջվել է: Այս պահին բժիշկը նրա մոտ է ու խաբում է մորս, թե ենթաստամոքսային գեղձի թեթև բորբոքում ունի: Իսկ ես սպասում եմ, որ բուժքույրն ինձ փաստաթղթերը բերի. ես պետք է ստորագրեմ, որ տեղյակ եմ ախտորոշմանը, և որ ինձ վրա եմ վերցնում պատասխանատվությունը, և այլն: Ա՛խ...

*Կատյան ձերքը տանում է դեպի սիրտը ու այդպես սառում:*

**Օեր կին** - Սիրտդ վատացա՞վ: Բուժքրոջը կանչեմ, թող քեզ դեղ տա:

**Կատյա** - Չէ, կարիք չկա: Հիմա կանցնի: Կարծես, սրտիս շիկացած երկաթ են դրել: Երբեմն, այսպես լինում է, հետո անցնում է: Արդեն անցավ:

*Կատյան նստում է բազմոցին: Մտնում է Ալինան:*

**Ալինա** - Բարև Լերա, դու ի՞նչ մոտ ես եկել, թե՞ աղջկաս:

**Օեր կին** - Ստացվում է, որ երկուսիդ մոտ եմ եկել, իմ երկու լավագույն ընկերուհիների մոտ:

**Կատյա** - Մամ, ինչպե՞ս իմացար, որ այստեղ եմ, պետք է արդեն գնացած լինեի:

**Ալինա** - Լավ, եթե ասում եք, որ այստեղ գտնվողները լավագույն ընկերուհիներ են, կարող եմ խոսել բոլորի ներկայությամբ... Աղջկաս եմ դիմում՝ նախ ես գիտեմ, որ նոր քաղցկեղային բջիջներ ունեմ և որ երկու ամսից ավել չեմ ապրի բուժքույրն ասաց: Այդ աղջիկն իմ հանդեպ այնքան գթասիրտ եղավ, որ ինձ ճիշտն ասաց: Չնայած փողի դիմաց, բնականաբար: Ես և նա կանխավ պայմանավորվել էինք, որ եթե քաղցկեղ ունենամ նա ինձ կհայտնի հարյուր ամերիկյան դոլարի դիմաց: Ուստի, խնդրում եմ աղջիկս, վճարիր նրան և խոստացիր, որ բժշկին ոչինչ չես ասի, այլապես երբևէ չեմ ընդունի այն ամենն ինչ պետք է ընդունեմ քեզ հետ կապված: Բուժքրոջ գաղտնիքը պահելու դիմաց ես ընդունում եմ քեզ և Անդրեյին: Կարծում եմ, պայմանավորվեցինք: Ու քանի որ կյանքիս հանգամանքները շեշտակիորեն փոխվել են, իմ վերաբերմունքը տեղի ունեցող դեպքերին նույնպես պատրաստ է փոփոխության: Մի խոսքով, քանի որ մեռնում եմ... ընդունում եմ քեզ և քո Անդրեյին, ընդունում եմ որպես «երկու երջանիկների դժբախտ սեր»: Եղեք երջանիկ ձեր դժբախտության մեջ: Հուսով եմ նրա ընտանիքը՝ նրա խեղճ կինը և երեխաները երկար չեն վշտանա: Ընդհանուր առմամբ, նրանց ընտանիքում սարսափելի բան չի կատարվել, ասված է չէ՞ «հոր հեռանալը սարսափելի չէ, սարսափելին մոր մեռնելն է»: Իսկ Անդրեյին ասա, թող վաղն այստեղ

զա, ինձ մոտ: կաշխատեմ, կջանամ ընկերանալ նրա հետ, առավել ևս, որ այդ ընկերությունը երկար չի տևելու՝ ամսից էլ պակաս:

*Դադար*

Իմացիր, սիրում եմ քեզ, աղջիկս և ընդունում եմ այնպիսին, ինչպիսին կաս: Ե՛վ քո «երջանիկ դժբախտության պարը», և՛ քո «երկու երջանիկների դժբախտ սերը»: Ես աղջիկներ, մեռնում եմ առանց վախի և թեթև սրտով. տանջանքներս վերջանում են, իսկ աղջիկս երջանիկ է: Ուրիշ ի՞նչ է պետք: Ես երջանիկ եմ քո երջանկությամբ, իմ դժբախտ Կատյա: Ես սիրում եմ քեզ:

*Կատյան կանգնում է, մոտենում է Ալինային, գրկում նրան: Նրանք նստում են բազմոցին գրկախառնված: Ծեր կինը շրջվել է նրանցից ու լալիս է: Մտնում է բուժքույրը:*

**Բուժքույր** - Ներեցեք, խնդրեմ, Կատյա, դուք պետք է ստորագրեք այս փաստաթղթերը: Սովորական կարգ է: Պետք է Դուք ստորագրեք: Կարդացեք և ստորագրեք բոլոր էջերի ներքևում:

*Բուժքույրը տալիս է փաստաթղթերը Կատյային: Կատյան կարդում է: Ստորագրում է մեկ փաստաթուղթը: Հետո երկրորդը: Ծեր կինը նստած է անկյունում և լաց է լինում: Կատյան ստորագրում է փաստաթղթերը:*

*Վարագույրը փակվում է:*

*Դերասանները դուրս են գալիս նախաբեմ և խոնարվում:*

#### **Պիես № 4**

### **Հանգիստ և ուշադիր**

*Գործող անձիք՝*

*Ծեր կին*

*Անդրեյ*

*Բուժքույր*

*Բացվում է վարագույրը: Քաղաքային հիվանդանոցի առանձնասենյակ այցելուների համար: Մենյակում ոչ մեծ բազմոց և մեկ պլաստմասե բազկաթոռ: Պատին կախված են ալերգիայի դեմ դեղամիջոցի մի քանի գովազդային պաստառներ:*

*Անդրեյն նստած է բազկաթոռին: Մտնում է բուժքույրը:*

**Բուժքույր** - Ցավոք, շատ վատ լուր եմ բերել ձեզ: Ձեր հիվանդը չի փրկվի: Բժիշկն անում է՝ ինչ հնարավոր է, բայց հույս չկա: Իսկ եթե մինչև վերջ անկեղծ լինեմ, ես իհարկե այս պահին խախտում եմ բժշկական էթիկան, բայց գիտե՞ք, իրականում նա արդեն մահացել է: Տասը թույլ առաջ: Հիմա բժիշկները մահվան եզրակացությունն են կազմում: Պաշտոնապես ձեզ կհայտնեն միայն ճաշից հետո: Խնդրում եմ ինձ չմատնեք, խնդրում եմ, չէ որ ձեր խնդրանքով, հանուն ձեզ ասացի:

*Դադար:*

**Բուժքույր** - Ցավակցում եմ:

*Անդրեյը նայում է բուժքրոջը, հետո ասես ինչ-որ բան հիշելով, տաքատի գրպանից հանում է հարյուր դոլարանոց և մեկնում բուժքրոջը:*

**Անդրեյ** - Ահա, վերցրեք, ինչպես պայմանավորվել էինք: Շնորհակալ եմ:

*Բուժքույրը թաքցնում է գումարը կրծկալի մեջ:*

**Բուժքույր** – Չարժե:

*Բուժքույրը պատրաստվում է գնալ:*

**Անդրեյ** - Նստեք, խնդրում եմ: Մի քիչ ինձ հետ մնացեք:

**Բուժքույր** - Լավ, կմնամ: Ներեք ինձ, որ էլի եմ ասում... բայց... եթե բժիշկը իմանա, որ ես ձեզ ասել եմ ժամանակից շուտ՝ ինձ աշխատանքից կազատեն: Իսկ թե, հանկարծ իմանան, որ գումար եմ...

**Անրի** – Ոչ որ չի իմանա, խոստանում եմ: Մի քիչ ինձ հետ կմնա՞ք: Չեմ ուզում մենակ մնալ:

**Բուժքույր** – Լավ-լավ: Ձեզ հետ եմ, ձեզ հետ եմ, շատ եմ ցավում: Նա դեռ այնքան գեղեցիկ ու երիտասարդ կին էր:

**Անդրեյ** - «Դեյլի» պարի մասին երբևէ լսե՞լ եք:

**Բուժքույր** - «Դեյլի՞», ոչ: Դեյլի քաղաք կա, Հնդկաստանի մայրաքաղաքն է, կարծեմ: Ինչ որ կապ կա՞ այդ պարի և քաղաքի միջև:

**Անդրեյ** – Ուղիղ: «Դեյլին» նրա պարն է, նա է ստեղծել այն կամ, ինչպես ինքը մի անգամ ինձ ասաց՝ ստացել... ստացել է պարը, հետո դարձել հանրաճանաչ:

**Բուժքույր** - Ուրեմն, նա պարուհի՞ էր:

**Անդրեյ** - Ես եմ պարուհին, ես եմ պարը, ես եմ ավարտը պարի:

**Բուժքույր** - Տարօրինակ բաներ եք ասում:

**Անդրեյ** - Նրա պարն էլ է տարօրինակ: Ինչ-որ յուրահատուկ, վախեցնելու աստիճան գեղեցիկ: Երբ կռահում ես, թե ինչ էս նայում՝ սարսափում ես և հետո... հետո որոշում ես հանձնվել այդ զգացողություններին և այդ ժամանակ հանկարծ, ամբողջ աշխարհը գլխիվայր է շրջվում: «Պետք է կորցնես աշխարհը, որպեսզի վերագտնես այն»- չեմ հիշում՝ ով է ասել, բայց ճիշտ նրա պարի մասին է ասված:

**Բուժքույր** - Իսկ ինչո՞ւ է նա իր պարը «Դեյլի» անվանել:

**Անդրեյ** - Որովհետև մի անգամ նա օպերայի և բալետի իր թատրոնով գնացել էր Հնդկաստան հյուրախաղերի: Այն ժամանակ նա պարզապես շարքային պարուհի էր: Եվ այնտեղ՝ Դեյլիում, նա հայտնվում է «Մեյն Բազար» կոչվող տեղում: Դա մի վայր է, որտեղ կուտակված է մարդկային թշվառությունը՝ այլանդակված մուրացկաններ, աղբ ու գարշահոտ և միևնույն ժամանակ ամենուր տաք կերակուր էր վաճառվում, քառասուն աստիճան շոգի պայմաններում այստեղ ու այնտեղ կախված են մորթված անասունների ու թռչունների լեշեր, աներևակայելի գարշահոտություն է տիրում: Մանկահասակ տղաները սուր մետաղադրամներով կտրում են տուրիստների պայուսակները,... հագուստի և կեղծ զարդերի առևտուրը եռում է: Նա տեսավ որ ամբողջ գետինը ծածկված է լորձով ու որդերով. շուրջբոլորը բղավոց է, ճիչ, տնքոց, մեքենաների աղմուկ և սոսկալի ծիծաղ: Մի խոսքով, իրական դժոռք: Եվ այդ ժամանակ նա անասելի ցավ զգաց՝ կարծես, միլիոնավոր ասեղներ մխրձվում էին մարմնի մեջ. ցավը բառացիորեն շղթայում է նրան: Ու նա ինքը դառնում համատարած ցավ: Եվ ահա, նրա կողքին հայտնվում է խորոված միս վաճառողը: Վաճառասեղանի վրա՝ այրվող ածուխներին, շիկացած երկաթ է լինում: Դա երևի կրակխառնիչ է, բայց Կասոյան դրան երկաթի կտոր է ասում: Ու առանց հասկանալու, թե ինչ է անում, նա վերցնում է երկաթի կտորը ու հպում իր սրտին: Նա այրում է իր կուրծքը, շատ ծանր այրվածք է ստանում, ու կորցնում է գիտակցությունը: Նրան

հիվանդանոց են տեղափոխում: Բուժում են երկար ժամանակ, չէ որ ուժգին նյարդային ցնցում և այրվածք էր ստացել: Նա թողնում է թատրոնը, երկարատև բուժում է ստանում, և ահա, մի անգամ գիշերը, համարյա լուսաբացին, երազում պար է տեսնում: Երազում տեսնում է ինչ-որ մեկին ով պարում էր այդ պարը: Եվ նա հասկանում է, որ այդ ինչ-որ մեկը և պարը նույն բանն են: Եվ դա հենց ինքն է: Հետո, երբ Կատյան արթնանում է՝ հասկանում է, որ հստակ հիշում է պարի շարժումներն ու անվանումը՝ «Դելի»: Եվ այդ առավոտյան, իր սենյակում նա ստեղծում է իր անկրկնելի պարը: Նա ինձ պատմել է, որ երևակայության մեջ վեր է հառնել Դելիի շուկայի ամբողջ վերապրածը՝ ահավոր ու սարսափելի՝ մուրացիկները, շիկացած երկաթը, այլանդակված մարդիկ, կեղտը, զարշահոտը, բայց այդ ամենից պարի շարժումները դառնում էին էլ ավելի գեղեցիկ: Այդպես է ծնվել «Դելի» պարը: Դա գովերգ է կեղտին ու սարսափին: Դա օրհներբ է մարդկային այլանդակությանն ու ողբերգությանը: «Դելին» ասում է աշխարհին, որ չկա ցավ ու տառապանք, կա միայն պարի հրաշք ու գեղեցկություն: Ամենը, ինչ որ կա պար է:

**Բուժքույր** - Ուրեմն Օսվենցիմն է՞լ է պար:

**Անդրեյ** - Օսվենցիմը ինչո՞ւ հիշեցրիք:

**Բուժքույր** - Որովհետև ֆաշիստներն այնտեղ հազարավոր հրեա երեխաների են սպանել:

**Անդրեյ** - Հրեա երեխաներն ի՞նչ կապ ունեն:

**Բուժքույր** - Ուզում եմ ասել, ձեր կարծիքով դա էլ է պա՞ր:

**Անդրեյ** - Հետաքրքիր է՝ ինչ արագ հակազդեցիք, անգամ չհասցրեցի մինչև վերջ բացատրել: Ինչ է ձեր ազգականները Օսվենցիմն՞ում են մահացել:

**Բուժքույր** - Ոչ, պարզապես, ինչ առաջինը միտքս եկավ, այն էլ ասացի:

**Անդրեյ** - Հետաքրքիր է, ինչու հենց Օսվենցիմը առաջինը ձեր միտն եկավ:

**Բուժքույր** - Ներեցեք, եթե ձեզ դուր չեկավ... ուղղակի, երբ ասացիք, թե ցավ ու տառապանքը հրաշագեղ պար են, ես Օսվենցիմը հիշեցի որպես ցավի ու տառապանքի խորհրդանիշ:

**Անդրեյ** - Չեմ կարողանում բառերով բացատրել իմաստն ու էությունը «Դելի» պարի: Այն տեսնել է պետք: Ես, ընդամենը կարող եմ ասել, թե ինչ հասկացա ինքս, երբ առաջին անգամ տեսա այն: Դա եղել է Կիևում: Ես հասկացա... չէ, ավելի ճիշտ՝ ողջ էությանմբ զգացի, որ... ինչպես ասեմ... ըը...կարևոր է թույլ տալ, որ ամեն ինչ լինի այնպես, ինչպես կա: Կարևոր է թույլ տալ, որ ամեն բան լինի, պարզապես լինի:

**Բուժքույր** - Ի՞նչ իմաստով...այդպես էլ կա:

**Անդրեյ** - Այն իմաստով, որ ամենը կա, ինչպես որ կա: Եվ այդ ամենը պետք է պարզապես լինի: Պետք է պարզապես թույլ տալ, որ այդ ամենը լինի, ոչինչ չարգելել: Ըը... դժվարանում եմ բառերով ասել: Ոչ այն իմաստով, որ արգելքներ



չլինեն, այլ որ արգելքներն էլ լինեն: Այսինքն՝ ներքուստ թույլ տալ, որ ամեն ինչ լինի՝ ամենն ինչ տեղի է ունենում շուրջդ և ամենուր: Ու թող ամեն բան մնա իր տեղում: Թող մնա ինչպես որ կա:

**Բուժքույր** - Իսկ Օսվենցիմը:

**Անդրեյ** - Օսվենցիմը նույնպես թող մնա իր տեղում: Ամենը իր տեղում:

*Դադար:*

**Բուժքույր** - Իսկ ձեր կինը վաղո՞ւց է ստեղծել այդ պարը:

**Անդրեյ** - Ինչո՞ւ կինս: Այդ պարը կինս չի ստեղծել: Ես իմ կնոջ մասին չէի խոսում, ուրիշ կնոջ մասին էի խոսում:

**Բուժքույր** - Օհ, ես չէի հասկացել, կարծում էի ձեր կնոջ մասին ենք խոսում: Այնտեղ, ներեցեք, ձեր կինն է պառկած, չէ՞: Այդ դժբախտությունը նրա հետ էր կատարվել, չէ՞:

**Անդրեյ** - Այո, նրա հետ, բայց ես ուրիշ կնոջ մասին էի խոսում, մեծ պարուհու մասին, որովհետև նրա պարը ուժ է տալիս ինձ, որ ընդունեմ այս աշխարհը, որ ապրեմ այս աշխարհում:

**Բուժքույր** - Այդ դեպքում, կարող եմ ձեզ մի հարց տալ:

**Անդրեյ** - Ոչ: Չգիտեմ: Լավ, տվեք ձեր հարցը:

**Բուժքույր** - Միայն, խնդրում եմ, մի նեղացեք: Այն, որ ձեր կինը ինքնասպան է եղել... դա՞ էլ «թող այդպես լինի»: Ամեն ինչ լինի, ինչպես որ կա՞: Դա նույնպես «Դելի» պարն է, չէ՞:

*Դադար:*

**Անդրեյ** - Ես եմ մեղավորը ամեն ինչի:

**Բուժքույր** - Վերջ, վերջ... ներեցեք ինձ, իզուր հարցրեցի:

**Անդրեյ** - Դուք հարցրեցիք, ես պատասխանեցի:

**Բուժքույր** - Ներեցեք:

**Անդրեյ** - Օսվենցիմում հրեա երեխաների հետ կատարվածի մեղավորը ես եմ: Ես նրանց փոշի դարձրի, ես նրանցից օձառ սարքեցի, որպեսզի լվացվեմ: Հայլ Հիթլեր:

*Անդրեյն կանգնում է ու պարզում ձեռքը առաջ:*

Հայլ Հիթլեր: Ահա իմ պարը: Հայլ Հիթլեր: Ահա իմ պարը:

*Անդրեյն շարտում է ձեռքը առաջ ֆաշիստական ողջույնում:*

Ահա իմ պարը: Հա՛յլ: Հա՛յլ: Հա՛յլ:

**Բուժքույր** - Խնդրում եմ, վերջ տվեք: Այստեղ չի կարելի:

**Անդրեյ** - Իմ պարը սա է: Հայլն է իմ պարը: Ամեն ինչի մեղավորը ես եմ, սա իմ պարն է:

*Մտնում է ծեր կինը:*

**Ծեր կին** - Անդրեյ, պետք է հանգստանաք: Անդրեյ, եկեք ինձ մոտ:

*Ծեր կինը մոտենում է Անդրեյին, ոտքի կանգնեցնում և գրկում: Նրանք կանգնած են գրկախառնված: Անդրեյն լալիս է ծեր կնոջ ուսին հպված:*

**Ծեր կին** - Քեզ հետ եմ, քեզ հետ եմ: Սիրտս վկայում էր, որ այստեղ պետք էմ: Դե հանգստացիր: Պետք է արիություն հավաքել ու համբերատալ լինել: Ամեն բան կավարտվի:

*Ծեր կինը դիմում է բուժքրոջը:*

**Ծեր կին** - Օրիորդ, ներեցեք, խնդրում եմ մենակ թողեք մեզ:

**Բուժքույր** - Այո, այո, իհարկե, ներեցեք:

*Բուժքույրը գնում է: Ծեր կինը ուղղորդում է Անդրեյին դեպի բազմոցը, նրանք նստում են, Անդրեյն դնում է իր գլուխը ծեր կնոջ ուսին, նա հեծկլտում է փոքր երեխայի պես:*

**Ծեր կին** - Դու պետք է նրան բաց թողնես: Քեզ պետք է նրան բաց թողնել: Գիտեմ՝ հեշտ չէ, բայց պետք է անես: Բաց արա սիրտդ, թույլ տուր, որ նա թոչի, նա անելիքներ ունի: Չէ որ նա արդեն քեզ հետ չէ: Նա արդեն այլ է: Նա, ում դու ճանաչում էիր, չկա այլևս:

**Անդրեյ** - Նա մահացել է:

**Ծեր կին** - Ես հասկացա:

**Անդրեյ** - Ամեն ինչի մեղավորը ես եմ:

**Ծեր կին** - Ժամանակն է, որ դադարես մեղավորներ փնտրել: Ժամանակն է, որ բոլորս հասունանանք: Ժամանակն է, որ բոլորս դադարենք մեղավորներ փնտրել: Վերջ տանք մեղավոր փնտրելուն՝ սա է հասունության նախանշանը: Դադարենք մեղավորներ փնտրել:

**Անդրեյ** - Իսկ Օսվենցիմը:

**Ծեր կին** - Ի՞նչ Օսվենցիմ:

**Անդրեյ** - Այն, որտեղ հրեա երեխաներից օճառ էին պատրաստում:

**Ծեր կին** - Ի՞նչ կապ ունեն ասածներիս հետ հրեա երեխաներն ու օճառը:

**Անդրեյ** - Ես ընդամենը ասացի այն, ինչը առաջինը մտքիս եկավ:

**Ծեր կին** - Հետաքրքիր է՝ ինչո՞ւ հենց Օսվենցիմը հիշեցիր: Այնտեղ քո հարազատներից որևէ մեկն է գոհվե՞լ:

**Անդրեյ** - Ոչ, ոչ ոք, բայց ինչ-որ մեկը մեղավոր է չէ՞ այնտեղ կատարվածի համար: Ո՞վ է մեղավոր: Ես ուզում եմ իմանալ՝ աշխարհում մեղավորներ կա՞ն, թե՛ ոչ: Սա է գլխավոր հարցը: Աշխարհում մեղավորներ կա՞ն:

**Ծեր կին** - Պետք է բաց թողնել, Անդրեյ: Հասկանում ես, ուղղակի քաջություն հավաքել և բաց թողնել: Հենց դա է ողջամտությունը: Եվ դա կլինի ազատագրում: Չէ որ նա այլևս քեզ չի պատկանում: Նրան, ում գիտեիր, այլևս չկա: Մահացել է: Բաց թող նրան և բոլորը կխաղաղվեն՝ և դու, և նա, և հրեա երեխաները:

**Անդրեյ** - Ասա ինձ՝ ե՞ս եմ մեղավոր, որ նա մահացավ:

**Ծեր կին** - Վերջ տուր երեխայությանդ: Հասկացիր վերջապես, որ դու հասուն մարդ ես: Հիշո՞ւմ ես նրա պարը: Սկզբում դժոխային, անտանելի ցավ որ զգում ես աշխարհի բոլոր տառապյալների համար: Այնպիսի ցավ, ասես՝ նրա սրտին շիկացած երկաթ են սեղմել: Իսկ հետո համընդհանուր ընդունում՝ ցավի սարսափի և ողբերգության: Հետո պարի գլխավոր մասը՝ գեղեցկությունը: Ամենն ինչ ընդունված է՝ մեր մեղքերը դառնում են գեղեցկություն: Մեր մեղքը դառնում է Աստվածային նախշ: Եվ հետո՝ պարի ավարտը: Աստված իմ, բայց ինչ տաղանդավոր կին է, որ կարողացել է ստեղծել իմաստով ու գեղեցկությամբ անկրկնելի այդ պարը:

**Անդրեյ** - Ես այդ ամենը կարող եմ զգալ միայն, երբ նայում եմ՝ ինչպես է նա պարում: Երբ նա կողքիս է՝ այդ ժամանակ եմ միայն կարողանում չհարցնել՝ «ո՞վ է մեղավոր»: Իսկ երբ նա չկա, ես դարձյալ սկսում եմ ամեն ինչում կասկածել, և գլխումս նորից հայտնվում է այդ անիծյալ Օսվենցիմը:

**Ծեր կին** - Կինդ էլ չկա: Բաց թող նրան, Անդրեյ: Դու քո կյանքը ունես, նա՝ իր:

Նա կատարել է իր ընտրությունը: Դա իր ընտրությունն է: Ոչ ոք մեղավոր չէ: Ոչ մեկին չես կարող մեղադրել: Բաց թող նրան: Պատկերացրու, թե աշխատակիցներիդ արձակուրդի փաստաթուղթ ես ստորագրում: Ամեն ստորագրությունդ նշանակում է արձակուրդ աշխատակցիդ համար: Ստորագրիր այդ արձակուրդը նրա համար: Բաց թող նրան, հրեա երեխաներին և շիկացած երկաթները, թող, որ գնան արձակուրդ: Թող այս ամենը թռչի: Թող ամենը թռչի:

*Մտնում է բուժքույրը:*

**Բուժքույր** - Խնդրում եմ, ինձ ներք, բայց այս փաստաթղթերը ստորագրել է պետք: Հասկանում եմ՝ դուք ծանր վիճակում եք, բայց, իրոք անհրաժեշտ է, որ ստորագրեք: Խնդրեմ՝ կարդացեք և ստորագրեք, բոլոր էջերի ներքևի մասում:

*Բուժքույրը տալիս է թղթերը Անդրեյին: Անդրեյն կարդում է: Մեկը մյուսի ետևից ստորագրում է թղթերը: Դանդաղ ստորագրում է յուրաքանչյուր թղթի ներզևում: Ծեր կինը նստած անկյունում լալիս է: Անդրեյն ստորագրում է փաստաթղթերը մեկը մյուսի ետևից:*

*Վարագույրը փակվում է:*

*Դերասանները դուրս են գալիս առաջնաբեմ՝ վարագույրից առաջ և խոնարհվում հանդիսատեսին:*

## Պիես 5-րդ

### Եվ ներսից և դրսից

**Գործող անձինք՝**

*Ալինա*

*Ծեր կին*

*Անդրեյ*

*Բուժքույր*

*Վարագույրը բացվում է:*

*Քաղաքային հիվանդանոցի առանձնասենյակ այցելուների համար: Մենյակում երեք մեծ բազկաթոռներ կան՝ սպիտակ արհեստական կաշվից և փոքր կլոր սեղան՝ թերթերի ու ամսագրերի համար: Պատին՝ բնության պատկերներով օրացույց:*

*Մենյակում բուժքույրն ու ծեր կինն են:*

**Բուժքույր** - Ցավոք, շատ վատ լուր եմ բերել ձեզ: Հիվանդը չի փրկվի: Բժիշկն անում է ինչ հնարավոր է, բայց հույս չկա: Սրտի կանգ է: Ընդարձակ ինֆարկտ է: Իսկ եթե մինչև վերջ անկեղծ լինեմ, ես իհարկե հիմա խախտում եմ բժշկական էթիկան, բայց, զիտեք, իրականում, նա արդեն մահացել է: Տասը րոպե առաջ: Հիմա բժիշկները մահվան եզրակացությունն են կազմում: Պաշտոնապես ձեզ կհայտնեն միայն ճաշից հետո: Խնդրում եմ ինձ չմատնեք, չէ որ ձեր խնդրանքով եմ սա անում, ձեզ համար:

*Դադար*

**Բուժքույր** - Ցավում եմ...

**Ծեր կին** - Այո, ի դեպ...

*Ծեր կինը ինչ-որ բան է փնտրում պայուսակի մեջ, հանում է հարյուր դոլարանոց ու մեկնում բուժքրոջը:*

**Ծեր կին** - Անչափ շնորհակալ եմ օպերատիվ ու ազնիվ ինֆորմացիայի համար:

*Բուժքույրը թաքցնում է գումարը կրծկալի մեջ, պատրաստվում է հեռանալ:*

**Ծեր կին** - Նստեք, խնդրեմ: Մի քիչ մնացեք ինձ հետ:

**Բուժքույր** - Լավ, կարող եմ: Միայն... ներեք, որ էլի եմ ասում... բայց... Եթե բժիշկը իմանա, որ ձեզ հայտնել եմ ժամանակից շուտ, աշխատանքից կհեռացնի: Իսկ եթե իմանան, որ նաև գումար եմ...

**Ծեր կին** - Ոչ որ չի իմանա, խոստանում եմ: Կարո՞ղ եք ինձ հետ նստել, չեմ ուզում մենակ մնալ:

**Բուժքույր** – Լավ-լավ, ահա, ձեզ հետ եմ: Եվ ուզում եմ ասել, որ շատ եմ ափսոսում, ընդունեք իմ ցավակցությունը:

*Դադար*

**Մեր կին** - Դուք երբևէ լսե՞լ եք «Դելի» պարի մասին:

**Բուժքույր** - Դելի՞: Ի նկատի ունեք որպես անո՞ւն, թե՞ Հնդկաստանի մայրաքաղաքը:

**Մեր կին** - Պարը ծնվել է Հնդկաստանի մայրաքաղաք Դելիում, մի վայրում, որ կոչվում է «Մեյն բազար»: Աղքատության, կեղտի, մարդկային տառապանքի մեջ, մի վայրում, որտեղ ամենուր նեխած մսամթերք է ու տուրիստների համար նախատեսված տարբեր ապրանքներ: Սա երբևէ իմ տեսած ամենաաքանչելի պարերից մեկն է: Իսկ ես քիչ չեմ տեսել, որովհետև մասնագիտությամբ բալետի քննադատ եմ:

**Բուժքույր** - Սքանչելի պար սարսափելի վայրո՞ւմ: Տարօրինակ է շատ: Գիտե՞ք, ընդամենը կես տարի է, ինչ ես աշխատում եմ այստեղ, և այս ընթացքում արդեն այնքա՛ն մեռելներ եմ տեսել:

**Մեր կին** - Մեռելներ՞:

**Բուժքույր** – Հա, մեռելներ, այսինքն հանգուցյալներ:

**Մեր կին** - Իսկ այդ մասին, ներեցեք, հիմա ինչո՞ւ եք ասում:

**Բուժքույր** - Պարզապես ուզում եմ կիսվել ձեզ հետ իմ փորձառությամբ: Դե մեզ մոտ, գրեթե ամեն շաբաթ մեկը մահանում է: Եվ գիտե՞ք, վերելակում ես մի օր հանկարծ մտածեցի: Ես բեռնատար վերելակում էի, այնտեղ պատգարակի վրա դիակ կար: Եվ ահա նայում եմ նրան և հասկանում եմ, ու այս ջահել աղջիկը ճիշտ իմ հասակակիցն է: Ես հանկարծ, կամքիցս անկախ, հանկարծ հստակ պատկերացրեցի ինձ նրա փոխարեն: Այս ամենը տեղի ունեցավ ինչ-որ շատ հստակ՝ տեսիլքի պես: Եվ հանկարծ պարզ դարձավ՝ չէ որ մի օր ես էլ մեռնելու եմ: Ձեզ, հավանաբար, հասկանալի չէ:

**Մեր կին** – Ձե, ինչո՞ւ, հասկանալի է:

**Բուժքույր** - Ոչ, հասկանալի չէ: Դա հասկանալի չէ ոչ ոքի: Ես հետո ում պատմում էի, բոլորը լսում և ասում էին «հասկանալի է», իսկ ես տեսնում եմ, որ հասկանալի չէ: Քանի ապրում ենք, կամ քաղցկեղ դեռ չունենք, չենք կարող հասկանալ, որ մենք էլ մի օր մեռնելու ենք: Թվում է, թե մինչ այդ դեպքը միշտ իմացել եմ, որ ես էլ եմ մեռնելու, չէ որ մտածել եմ այդ մասին: Եվ հանգուցյալներ շատ անգամ տեսել եմ: Երբ քոլեջում էի սովորում դիախերձումների եմ մասնակցել: Բայց այս անգամ, հանկարծ, ինչ-որ յուրահատուկ կերպով հասկացա, ես, հանկարծ, իսկապես հասկացա, որ ես էլ կարող եմ մեռնել և մեռնելու եմ: Ես անգամ դա բացատրել չեմ կարող ձեզ: Ասենք եթե հիմա

ինքներդ ձեզ ասեք. «մի օր ես մեռնելու եմ» և դուք թեկուզ հարյուր անգամ կրկնեք ինքներդ ձեզ. «ես մեռնելու եմ, մեռնելու եմ, մեռնելու եմ», ոչինչ չի լինի, ոչինչ էլ չեք հասկանա: Եթե դուք ազամ լսում եք ու մտածում. «Նորություն չէ, ես էլ եմ այդպես մտածել», այն չէ: Մենք չենք հասկանում, որ մեռնելու ենք: Իսկ ես, հանկարծ, այդ պահին շատ հստակ հասկացա: Մենք չենք հասկանում, որ պիտի մահանանք: Դուք գիտեք, որ մեռնելու եք, բայց դուք դա չեք հասկանում: Սա է ձեր խնդիրը: Եթե դուք հասկանայիք, թե հասկանայիք, որ մեռնելու եք, կսկսեիք այլ կերպ ապրել:

**Ծեր կին** – Իսկ ի՞նչ է նշանակում՝ այլ կերպ:

**Բուժքույր** - Դուք կարծում եք՝ ես վատ մարդ եմ, ձեզնից փող եմ վերցնում, օգտվում եմ ձեր դժբախտությունից, որ փող կորզեմ: Իսկ ես այլ կերպ եմ մտածում: Տեսնում եմ, որ հարուստ կին եք: Չէ որ ինքներդ եք ինձ գումար առաջարկում, որովհետև ուզում եք թույլ առաջ իմանալ՝ ձեր մտերիմը արդեն մահացել է, թե՞՞ դեռ ոչ: Իսկ ես վերցնում եմ փողը, որովհետև այդ փողն ինձ հիմա շատ է պետք, որովհետև ես պետք է ուղևորության փող հավաքեմ: Ուզում եմ Հնդկաստան գնալ: Երկար ժամանակով, գուցե ընդմիջտ: Կարծում եմ, ինձ կհաջողվի այնտեղ որևէ ուսուցչից սովորել թե ինչպես է պետք վերաբերվել մահվանը, իմանալ, թե ինչ է մեզ սպասվում, ինչ է լինելու մահից հետո: Ես ուզում եմ հենց ուսուցչից իմանալ՝ ոչ գրքերից: Ի՞նչ եք կարծում, սա ուսուսի՞ս է, այն ինչ ասում եմ, թե Հնդկաստան գնալն իմաստ ունի:

**Ծեր կին** - Գիտեք, ասացվածք կա. «Լավ է՝ քո կյանքը վատ ապրես, քան լավ բայց ուրիշինը»:

**Բուժքույր** - Մի՞թե հնարավոր է ուրիշի կյանքն ապրել, չե՞ որ յուրաքանչյուրն իր կյանքն ունի:

**Ծեր կին** - Հնարավոր է: Պարզվեց, իմը ուրիշինն էր: Ես ապրել եմ մի կյանք, թվում է՝ հրաշալի, գուցե երջանիկ, բայց այն իմը չէր, ուրիշինն էր: Սակայն, հիմա խոսքն իմ մասին չէ: Ուզում եմ, որ դուք լավ հիշեք այս ասացվածքը: Եվ մի կարծեք, թե Հնդկաստանում ամեն ծառի տակ գուրու է նստած իր նոր աշակերտների սպասումով: Չնայած, դուք միևնույն է անելու եք այն ինչպես կստացվի: Ափսոս, որ չենք տեսել «Դելի» պարը: Քանի որ դուք այդքան զգայուն եք, հավանաբար այն ձեզ վրա ուժեղ ազդեցություն կունենար:

**Բուժքույր** – Ուրեմն պատմեք ինձ այդ պարի մասին: Մի քանի բառով:

**Ծեր կին** – Մի՞թե հնարավոր է պատմել պարի մասին:

**Բուժքույր** - Բայց դուք քննադատ եք, մի՞թե դա չէ ձեր գործը:

**Ծեր կին** - Սոսկալի է, իրոք որ դա է իմ գործը: Ասացի չե՞, գերադասելի է վատ կյանք ունենալ, բայց՝ սեփականը, քան լեցուն ու հետաքրքիր, բայց՝ ուրիշինը: Ես ուրիշի կյանք եմ ապրել: Պատմել եմ ուրիշների պարերի մասին, իսկ ինքս, գոնե մեկ գեղեցիկ պարային շարժում չեմ սովորել:

**Բուժքույր** – Ուրեմն այդ ի՞նչ պար է «Դելին», ե՞րբ է ստեղծվել, ո՞վ է հեղինակը, թե՞ ազգային պար է:

*Դադար*

**Մեր կին** - Դուք երբևէ տեսե՞լ եք, ինչպես են խոզ մորթում:

**Բուժքույր** – Ոչ, չեմ տեսել:

**Մեր կին** - Բայց, երևի, կռահում եք, որ դա այնքան էլ հաճելի տեսարան չէ:

**Բուժքույր** - Չէ, չեմ կռահում, ավելի ճիշտ, այդ մասին չեմ մտածել:

**Մեր կին** - Իսկ դուք, ներեցեք, խոզի միս ուտո՞ւմ եք:

**Բուժքույր** - Ուտում եմ:

**Մեր կին** - Այսպես ուրեմն, զազրելի տեսարան է՝ երբ խոզ են մորթում: Եթե հասկանալիք, ինչպես հասկացել եք, որ մեռնելու եք, հավատացեք, որ ոչ մի կտոր կուլ չէր գնա: Մսագործները սպանում են կովերին կամ խոզերին, արյունը հոսում է գետի պես, խեղճ կենդանիները ճչում են ու նրանց աչքերը լի են վայրի սարսափով, իսկ հետո դուք նրանց ուտում եք: Ես եղել եմ սպանդանոցում, այն էլ՝ օրինակելի, այն էլ՝ ամերիկյան... Ես, ճիշտ է, մինչ այդ էլ միս չէի ուտում, իսկ իմ որոշ կուլեզաներ, որ միասին էինք, այդ օրվանից դարձան բուսակեր:

**Բուժքույր** - Իսկ ի՞նչ էիք անում սպանդանոցում:

**Մեր կին** –Մի ամերիկյան բեմադրիչի բալետային ներկայացում էինք նայում: Նա բալետ էր բեմադրել և պրեմիերան խաղում էին սպանդանոցում: Ամերիկացի բոլոր քննադատները հիացած էին: Ներկայացումն Իրաքի պատերազմի դեմ էր: Կատարյալ ապուշություն: Ապաշնորհ ներկայացում, անտաղանդ մտահղացում, գոեհկություն և ոչինչ ավելի: Բայց սա չէ կարևորը: Ծնողներս բուսակերներ են եղել և ես երբևէ, ծնված օրիցս, միս չեմ կերել, մինչև երեկ: Իսկ, ահա, երեկ շուկայից խոզի միս գնեցի, եկա տուն, կտրեցի մի փոքր կտոր, խցկեցի բերանս և սկսեցի ծամել: Եվ ծամեցի: Ես կարողացա ծամել և կուլ տալ խոզի հում միսը: Ահա թե ինչից կուզեի սկսել իմ պատմությունն այն մասին, թե ինչ ասել է «Դելի» պար:

**Բուժքույր** - Չեմ հասկանում:

**Մեր կին** –Ողջ կյանքս կեղծ է: Իրաքյան պատերազմի դեմ ներկայացում՝ սպանդանոցում: Բոլորն, ովքեր հիանում են «Դելի» պարով՝ ստախոսներ են: Այդ պարը հասանելի չէ մեր ընկալմանը: Վերջում այդ մսից հետ տվեցի և ուշաթափվեցի, ահա թե ինչ կատարվեց: Գրել պարի մասին և պարել չիմանալ՝ դա լավ ապրած ուրիշի կյանք է: Պարի մասին պատմելը և բուն պարը ամենևին էլ նույն բանը չեն: Պարով հիանալը և պարելը՝ նույն բանը չէ: «Դելի» պարը հում խոզի միսը ծամող



երջանիկ բուսակերի պարն է: Կարեկցանք՝ ահա այն, ինչ երբևէ չի եղել իմ մասնագիտական կյանքում: Կարեկցանք է ազնվության ու երևույթների իրական գիտակցումը: Նա, ով կարեկցում է, ցույցերիչի գնում: Նա, ով իսկապես կարեկցում է՝ ոչ թե թատրոնի մասին հողվածներ է գրում, այլ զբաղված է իր դերի կատարմամբ:

**Բուժքույր** - Մի՞ թե կարեկցանք չէ Իրաքյան պատերազմի դեմ հանդես գալը:

**Օեր կին** - Դա ինտելեկտուալ կոնցեպտ է, իսկ իրական կարեկցանքը կոնցեպտներ չունի: Ուրիշի կյանքով ապրելը նշանակում է ապրել կոնցեպտի մեջ, որը ստեղծել է մեկը, ով չունի ոչ կարեկցանք, ոչ էլ՝ երևույթների իրական գիտակցում: Ես ապրել եմ գեղեցիկ կյանք, նկարագրելով սպանդանոցի սարսափն ու «թովչանքը», իսկ «Դելի» պարի հեղինակը այն արնաշաղախ կովի հոգին լեշն է, որը հանկարծ սկսում է պարել կախարդական գեղեցկության պար: Նա, ով խոսում է քաքի մասին, քաք է, իսկ ով խոսում է գեղեցկության մասին՝ գեղեցկություն է: Սեփական վատ կյանքն ավելի լավ է, քան ուրիշի լավ կյանքը: ՈւՖ:

*Դադար: Մտնում է Անդրեյն:*

**Անդրեյ** – Ի՞նչ կա:

**Օեր կին** – Անդրեյ... Ցավոք ամեն ինչ վատ է... Նա մահացավ:

*Դադար:*

**Անդրեյ** – Ֆրիդ: Անսովոր զգացում է: : Անգամ չգիտես՝ ինչպես արձագանքել:

*Դադար:*

**Անդրեյ** - Լուրը սարսափելի է, իսկ ես ոչինչ չեմ զգում՝ ոչ վախ, ոչ ցավ: Դու ասացիր, ես լսեցի, ես հասկացա՝ մահացել է իմ սիրելի կինը: Իսկ ի՞նչ անեմ: Չգիտեմ՝ ինչպե՞ս արձագանքել: Հավանաբար ես պետք է լաց լինեմ, բայց լացս չի գալիս: Ինչ-որ տարօրինակ զգացում է: Ես ոչինչ չեմ զգում:

**Օեր կին** – Ես էլ շատ անսովոր զգացում ունեմ: Մեր վիշտն այնքան մեծ է: Բայց ի՞նչ անել:

Անդրեյ:

*Ծեր կինը կանգնում և գնում է դեպի Անդրեյն: Նրանք գրկախառնվում են և այդպես մնում են կանգնած:*

**Բուժքույր** - Որովհետև դուք չեք հասկանում, որ վերջը մահն է:

**Անդրեյ** - Ի՞նչ:

**Բուժքույր** - Ամբողջ կեղծիքի և անիմաստության պատճառն այն է, որ դուք չեք հասկանում՝ վերջում մահն է, ամեն ինչի վերջում մահն է:

**Անդրեյ** - Դուք դա մե՞զ եք ասում:

**Բուժքույր** – Բոլորին: Ինքս վերջերս եմ հասկացել:

**Անդրեյ** - Ի՞նչ է ասում, չեմ հասկանում: Օրիորդ, դուք մե՞զ հետ եք խոսում:

**Ծեր կին** – Նա հասկացել է, որ մի օր մեռնելու է, իսկ դու դեռ չես հասկացել՝ մահն ինչ է: Ահա թե ինչ է ասում:

**Անդրեյ**- Ե՞ս չեմ հասկացել՝ ինչ է մահը: Նա ո՞ւմ է ասում: Ե՞ս չեմ հասկացել: Դուք այդ ինձ էիք ասում: Այդ ե՞ս չգիտեմ՝ ինչ է մահը: Ես չգիտե՞մ: Ե՞ս: Ես այստեղ եմ, այս վայրում, այն պատճառով...

*Անդրեյն սկսում է բղավել:*

Մահվան պատճառով: Դուք հրաշալի գիտեք, որ մենք այսեղ ենք մահվան առիթով:

**Բուժքույր** - Ոչ ձեր մահվան:

**Անդրեյ** - Ի՞նչ:

**Բուժքույր** - Ներեցեք, ես պետք է գնամ: Սպասեք այստեղ, ես շուտով կվերադառնամ կհայտնեմ ձեզ թե ինչ է պետք անել:

*Բուժքույրը գնում է: Անդրեյն ու Ծեր կինը նստած են բազմոցին:*

*Դադար:*

**Անդրեյ** - Մի՞ թե սա ուրիշի մահ է: Մի՞ թե ինձ համար օտարի մահ է:

**Ծեր կին** - Նա ուզում էր ասել, որ մահը, նույնիսկ քեզ հարազատ մեկի մահը, միևնույն է՝ ուրիշի մահ է, այն իմաստով, որ քոնը չէ:

**Անդրեյ** - Ինչե՞ր եք ասում: Բառ իսկ չեմ հասկանում: Ես չեմ հասկանում՝ դուք ինձ ինչ եք ասում: Ես շատ մոտ մարդու եմ կորցրել: Ես գիտեմ՝ ինչ է մահը: Ահա այն, կանգնած է իմ առջև, ես տեսնում եմ մահը: Ահա այն, այստեղ է:

*Դադար:*

Ի՛նչ շատ են բառերը: Ինչքա՛ն շատ եք բառեր օգտագործում: Խոսում եք, խոսում եք: Միտքը հաջորդում է մտքին: Հետո էլի ու էլի: Եվ դուք խոսում եք, խոսում: Ինչքան շատ են բառերը, ինչքա՛ն շա՛տ: Լռությունն է պարի առավելությունը ամեն ինչի նկատմամբ:

*Դադար:*

Սկզբում լռությունն էր, և լռությունն Աստծունն էր, և լռությունն Աստված էր:

*Դադար:*

*Մտնում է Ալինան: Նա քայլում է, ոտքերը մի կերպ տեղաշարժելով, հենվելով ձեռնափայտի վրա: Ծեր կինն ու Անդրեյն օգնում են նրան նստել:*

**Ալինա** - Որոշեցի գալ այստեղ, տանը մնալ չկարողացա:

**Ծեր կին** - Նստիր, նստիր: Մեզ ասացին, որ նստենք այստեղ ու սպասենք:

**Ալինա** - Ինչին սպասենք: Ես արդեն ամբողջը գիտեմ, բուժքույրն անմջապես զանգահարեց ինձ և ասաց: Էլ ինչի՞ն սպասեմ:

**Ծեր կին** - Երևի բժշկին: Նրա վերջնական խոսքին:

**Ալինա** - Ոչ մի խոսք էլ ինձ պետք չի: Խոսքի համար չեմ եկել: Ուզում եմ այստեղ լինել, և վերջ:

**Ծեր կին** - Է, եղիր, միայն սսկվիր, խնդրեմ: Լուռ մնա: Ինչպես մեր Անդրեյն: Նա, վերջնական, հասկացավ, որ լռությունը ոսկի է, և լռեց: Դու էլ սսկվիր:

*Ծեր կինը հանկարծ կորցնում է իրեն, սկսում է բղավել:*

Սսկվի՛ր, հասկացա՞ր: Ոչ մի բառ չլսե՛մ քեզնից: Եկել ես՝ նստի՛ր և լռի՛ր: Չե՛մ կարող քեզ լսել: Ո՛չ մի բառ, հասկացա՞ր... հասկացա՞ր:

**Ալինա** – Հասկացա:

*Դադար:*

**Ծեր կին** - Ներիր, նյարդերս տեղի տվեցին: Ներիր:

**Ալինա** - Անդրեյ, ձեր կինն ինչպե՞ս է, երեխաներն ինչպե՞ս են:

**Անդրեյ** - Լավ են: Կինս և երեխաներս ծնողներին մոտ են՝ ամառանոցում: Ներեցեք, չեմ ուզում խոսել: Կարելի՞ է ես լռեմ:

**Ալինա** - Այո, այո, իհարկե... մենք բոլորս պետք է ենթարկվենք այս խիստ տիկնոջ հրահանգներին:

**Ծեր կին** – Նորից եմ ներողություն խնդրում:

**Ալինա** - Ոչ, ոչ, ինչո՞ւ: Շարունակիր հրամայել: Չե՞ որ դու էքսպերտ ես, քննադատ, չե՞ որ դու ուրիշներից լավ գիտես, թե մենք ինչ պետք է անենք: Մենք քո ենթականերն ենք:

**Ծեր կին** – Որոշել ես ցույց տալ բոլորին, թե ի՞նչպես լինել հավասարակշռված: Իսկ ինձ թվում է, որ առանձնապես ծանր չես տանում:

**Ալինա** - Ես վաղուց այս ամենն ընդունել եմ: Եվ պետք չէ կոպտել: Հոչակավոր քննադատին դա չի սազում: Անտակոտ միայն սկսնակներն են լինում, իսկ քեզ նմանները պետք է սովորեցնեն: Ուզում ես խրատել ինձ՝ խնդրեմ, իսկ կոպտել պետք չէ, տարիքդ արդեն այն չէ:

**Ծեր կին** - Ներիր, գիտեմ, որ քեզ համար ամենաբարդն է:

**Ալինա** - Ոչ, բարդ չէ: Չե՞ որ ընտրություն չունեմ: Չե՞ որ դեռ ողջ եմ և շարունակում եմ ապրել և ինչ-որ կերպ պիտի ապրեմ: Ոչ մի ընտրություն չկա ամենն ընդենելուց բացի: Ամբողջ կյանքս միայն դա եմ անում՝ ընդունում եմ և ընդունում: Հիմա էլ դարձյալ կարողացա այս ամենն ընդունել՝ և պարուհուն, և այդ պարը, և ավարտն այդ պարի:

**Ծեր կին**– Եվ ինչպե՞ս կարողացար:

**Ալինա** - Մահվան շնորհիվ: Այս կյանքում մեր ունեցած ամենաթանկարժեք բանը մահն է: Ես էլ արդեն քանի տարի է մեռնում եմ: Մեկ քաղցկեղ ունեմ, մեկ՝ հաջող վիրահատություն, հետո նորից քաղցկեղ ու նորից հաջող վիրահատություն: Ես, Լերա, հանկարծ հասկացա մի պարզ բան՝ մենք, բոլորս մեռնելու ենք: Հա-հա: Մահը ամենաօգտակար դեղն է: Մահը բուժում է բոլորին: Հա-հա:

*Ալինան ծիծաղում է: Ծեր կինը ժպտում է: Անդրեյն զարմացած նայում է նրանց:*

**Ալինա** - Նկատե՞լ ես, Լերա, ռուսերենում քաղցկեղին էլ են ռակ ասում՝ խեցգետնին էլ, նույնն էլ անգլերենում է՝ cancer նշանակում է և խեցգետին, և քաղցկեղ... Այնպես որ, մեր բժիշկը ռակն է՝ գետի ռակը cancer: Հա-հա- հա: Վիշտ է, բայց ծիծաղելի է: Աստված վկա ծիծաղելի է: Հա-հա- հա:

*Ալինան սկսում է հռհռալ: Ծեր կինը նույնպես ծիծաղում է: Նրանք երկուսով ծիծաղում են ավելի ու ավելի ուժգին, ծիծաղի նույն սաստկանում է:*

**Ալինա** - Ռակը մեր բժիշկն է, լսում ես, Լերա, ռակը: Ոչ հիվանդությունը, այլ այն, որ գետում է:

*Ծիծաղի նույն: Կանայք ծիծաղից ուշագնաց են լինում:*

Գետի ռակը մեր բժիշկն է: Հասկանում ես: Հա-հա-հա:

Ռակը բժիշկ է: Հասկանո՞ւմ ես: Հա-հա- հա:

*Կանայք ծիծաղում են, Անդրեյն նայում է նրանց և նրա դեմքին ժպիտ է հայտնվում: Մտնում է բուժքույրը: Ծիծաղը դադարում է: Կանայք հանգստանում են: Բուժքույրը մոտենում է Ալինային:*

**Բուժքույր** - Ներքե ինձ, խնդրում եմ: Ես հասկանում եմ, որ ձեր վիշտը մեծ է: Բայց մեզ պետք է օգնել ձեզ: Եվ որպեսզի կարողանանք օգնել ձեզ դուք պետք է ստորագրեք այս փաստաթղթերը, որ դիախերձում չի լինելու ու էլի մի քանի փաստաթղթեր: Եվ միայն դրանից հետո ենք մարմինը տեղափոխում դիախերձարան: Այդպես է պետք:

*Բուժքույրը տալիս է թղթերը Ալինային: Ալինան կարդում է: Ստորագրում է մեկը: Հետո երկրորդը: Հետո նայում է Անդրեյին: Անդրեյը նայում է նրան: Ալինան շարունակում է ստորագրել թղթերը, Ծեր կինը նստած է անկյունում և ժպտում է: Ալինան ստորագրում է թղթերը:*

*Վարագույրը փակվում է:*

*Դերասանները դուրս են գալիս նախաբեմ, խոնարհվում են հանդիսատեսին:*

## Պիես № 6

Ե՛վ սկզբում, և՛ վերջում

**Գործող անձինք՝**

**Կատյա**

**Ալինա**

**Անդրեյ**

**Բուժքույր**

*Վարագույրը քացվում է:*

*Քաղաքային հիվանդանոցի առանձնասենյակ այցելուների համար: Մենյակում երկու քազմոց և՛ ոչ մի աթոռ: Պատին ֆոտոպաստառ է փակցված, որ պատկերում է միջնադարյան ճարտարապետությամբ Եվրոպական ինչ-որ քաղաք՝ գոթական տաճարով և կղմինդրե տանիքներով շենքեր:*

*Անդրեյն նստած է քազկաթոռին: Մտնում է Կատյան:*

*Դադար*

**Կատյա** - Ողջույն, եկել եմ, որ կողքիդ լինեմ այս ծանր պահին: Ինչպե՞ս ես:

**Անդրեյ** - Ճիշտն ասած, շատ վատ եմ:

**Կատյա** - Իսկ Օլգա՞ն:

**Անդրեյ** - Թունավորվել է: Երկու տուփ քնաբեր է խմել:

*Դադար*

Կատյա, ներիր, Բայց այս ամենից հետո ես չեմ կարող երջանիկ լինել:

**Կատյա** - Իսկ ին՞չ է, երջանկությունը կախված է հանգամանքներից՞:

**Անդրեյ** - Իսկ ինչի՞ց է այն կախված:

**Կատյա** - Սրտից: Երջանկությունը սրտիդ մեջ է: Մի՞թե երբևէ չես ունեցել այնպիսի զգացողություն, որ ասես՝ սրտիդ շիկացած երկաթ են սեղմել:

**Անդրեյ** - Չգիտեմ: Վերջերս ես ոչինչ չեմ զգում:

**Կատյա** - Դա չզգալ հնարավոր չէ: Այդ սուր ցավը: Միտոդ այնպես է այրվում, որ դառնում է շիկացած երկաթի կտոր: Միտոդ մի կտոր շիկացած երկաթ է: Երջանկությունն այնտեղ է՝ այդ կրակի խորքում, սրտիդ ամենակենտրոնում:

**Անդրեյ** - Քո կարծիքով երջանկությունը անդիմադրելի ցա՞վ է:

**Կատյա** - Ոչ, երջանկությունը հանգստություն է և խաղաղություն:

**Անդրեյ** - Բայց եթե սրտիդ շիկացած երկաթ դնեն, անասելի ցավ չէ՞ս գգաս:

**Կատյա** - Միայն առաջին վայրկյաններին, իսկ հետո զգում ես երանություն ու հանգստություն: Հետո՝ այդ հանգստությունից հառնում են մարդիկ, քաղաքներ, ծառեր ու ծաղիկներ, ամբողջ աշխարհն է վեր հառնում: Աշխարհ, որ հյուսված է խաղաղության ու գեղեցկության նախշերով:

**Անդրեյ** - Այո, այո: Այդ ամենը, ինչի մասին խոսում ես, այդ ամենը կա քո պարի մեջ, քո պարը նայելիս մարդ ճիշտ այդ զգացողությունն է ունենում: Բայց ես չեմ պարում: Ե՞ս ինչ անեմ: Կինս՝ Օլգան, պարուհի չէ, նա՞ ինչ պետք է աներ:

**Կատյա** - Ապրեր իր կյանքը: Պարելու համար պետք չէ պարող լինել: Մենք ծնվել ենք պարելու համար և մեր ամբողջ կյանքը պար է: Ուտում ես, թե աշխատանքի գնում, խոզ ես մորթում, կենակցում ես, թե մեքենա ես նորոգում՝ դու պարում ես: Դու շարժվում ես երաժշտության ոլորտով, ուրեմն՝ պարում ես:

**Անդրեյ** - Ի՞նչն էս անվանում երաժշտություն, որին ենթարկվում են բոլոր շարժումները: Մի՞թե հիմա երաժշտություն է հնչում:

**Կատյա** - Սրտիդ ուրբա՞ն: Սրտիդ զարկը քո երաժշտությունն է: Ձեռքդ դիր սրտիդ, փակիր աչքերդ և լսիր:

*Կատյան աջ ձեռքը դնում է սրտին, աչքերը փակում է, անշարժանում է մի քանի վայրկյանով, հետո բացում է աչքերը և ձեռքը սրտից հեռացնում:*

**Կատյա** - Ահա մեր երաժշտությունը, որի տակ մենք պարում ենք: Բոլոր մարդիկ, առանց բացառության: Մենք պարողներն ենք, մենք պարն ենք, մենք ենք ավարտը պարի: Բոլոր պատճառներն ու հետևանքները ծագում են այս պարից ու վերջում նորից ետ են վերադառնում: Երբ երաժշտությունն ավարտվի, քո աշխարհը կվերադառնա այնտեղ, որտեղից եկել էր՝ սրտիդ մեջ:

**Անդրեյ** - Դու կարող ես մի՞շտ լսել սրտիդ ուրբա՞ն, ամեն վայրկյա՞ն:

**Կատյա** - Լսում եմ միշտ:

**Անդրեյ** - Բայց ես և մյուս մարդիկ չենք լսում: Մենք չենք կարող ամեն վարկյան լսել մեր սրտերի զարկը: Մենք պետք է մեքենաներ նորոգենք, սեքս անենք և մորթենք մեր խոզերին:

**Կատյա** - Պետք չէ ամեն վարկյան լսել: Պարզապես պետք է այդ ուրբա՞նը զգալ ամբողջ եությամբ:

**Անդրեյ** - Բայց ես չեմ կարող: Իմ կինը երկու տուփ քնաբեր է խմել այն պատճառով, որ ես նրան ասացի, որ ուրիշ կնոջ եմ սիրում: Որ քեզ եմ սիրում: Եվ հիմա մենք նստած ենք այստեղ, այս հիվանդանոցում, որտեղ ամենուր մահվան հոտ է, իսկ իմ ու

քո միջև դժբախտ կինս է, որ մեր պատճառով թունավորվել է: Եվ ես չեմ կարող իմ մեղքը չզգալ: Դու քեզ մեղավոր չե՞ս զգում կատարվածի համար:

**Կատյա** - Իսկ ի՞նչ է, անպայման պետք է մեղավոր փնտրել: Անպայման պետք է, որ ինչ-որ մեկը մեղավոր լինի: Առանց մեղքի ու մեղավորի հնարավոր չէ՞: Ավելի լավ չե՞ մեղավոր փնտրելու փոխարեն պարզապես կարեկցել: Կարեկցելն է ավելի կարևոր, ոչ թե մեղավոր փնտրելը:

**Անդրեյ** - Իսկ Օսվենցի՞մը:

**Կատյա** - Ի՞նչ Օսվենցիմ:

**Անդրեյ** - Այն Օսվենցիմը, որտեղ հրեա երեխաներից օճառ էին պատրաստում, այնտե՞ղ էլ մեղավորներ չեն եղել:

**Կատյա** - Ինչ կապ ունի Օսվենցիմը: Մտերիմներից մեկը այնտե՞ղ է գոհվել:

**Անդրեյ** - Ոչ, օրինակի համար եմ ասում, առաջինը դա հիշեցի:

**Կատյա** - Տարօրինակ է, որ առաջինը դա հիշեցիր:

**Անդրեյ** - Սրա հետ ինչպե՞ս վարվեմ, ասա, Օսվենցի՞մն ինչ անեմ:

**Կատյա** - Բաց թողնես:

**Անդրեյ** - Բայց ես չեմ կարող, չեմ կարող:

**Կատյա** - Պետք է քաջություն հավաքել և մի օր շիկացած երկաթով այրել ինքդ քեզ: Պետք է կարեկցանք գտնել քո մեջ: Որովհետև միայն կարեկցանքը կազատի քո միտքը Օսվենցիմից և մեղավորներ փնտրելուց:

*Գալիս է բուժքույրը:*

**Բուժքույր** - Կարծես, ամեն ինչ բարեհաջող ավարտվեց: Ձեր կինն ուշքի եկավ: Նա լավ է: Կապրի: Կարող եք շնչել և արտաշնչել: Հիմա նրա մոտ չի կարելի գնալ: Նա քնած է: Գնացեք տուն և եկեք վաղն առավոտյան: Եվ բժշկին էլ կարող եք տեսնել վաղն առավոտյան:

*Անդրեյն ոտքի է կանգնում, մոտենում է Կատյային, գրկում է նրան: Նրանք մնում են կանգնած գրկախառնված:*

**Կատյա** - Օրիորդ, մեզ մենակ թողեք, լա՞վ:

**Բուժքույր** - Այո, այո, իհարկե: Պարզապես դուք պետք է ստորագրեք... կարգն այդպես է...

**Կատյա** - Կես ժամից, եթե կարելի է:



**Բուժքույր** - Լավ, ես ավելի ուշ կգամ: Կուզե՞ք, հանգստացնող բերեմ ձեզ համար:

**Կատյա** – Չէ, չէ: Պետք չէ:

**Անդրեյ** – Մեզ խոսել է պետք:

**Բուժքույր** - Ներեցեք:

*Բուժքույրն գնում է: Կատյան ու Անդրեյն դեռ միմյանց գրկած կանգնած են: Անդրեյն ձեռքերն իջեցնում է, հեռանում է Կատյայից, նստում է բազմոցին:*

*Դադար:*

**Անդրեյ** - Գիտես, ինձ համար ավելի հեշտ կլինեք, եթե նա մահանար:

**Կատյա** - Որովհետև վախենում ես:

**Անդրեյ** - Ինչի՞ց:

**Կատյա** - Ամեն ինչից: Դու վախկոտ ես, Անդրեյ: Վախենում ես ինքդ քեզնից, վախենում ես քեզ շրջապատող աշխարհից: Եվ միակ արժեքը, որ ունես՝ մեր սերն է, բայց դու չես հավատում այդ սիրուն, Օսվենցիմի ուրվականը, որ ապրում է քո գլխում, խանգարում է քեզ: Դու, ինքդ այդ Օսվենցիմում ես գտնվում: Դու այն հրեա երեխան ես, որից կյանքը օձառ է պատրաստում, որպեսզի տարբեր երկրների իրավապաշտպանները կարողանան օձառել իրենց ձեռքերը իրենց ցույցերին գնալուց առաջ: Նույնիսկ հիմա, երբ ես այս բառերն եմ ասում, դու վախենում ես, որովհետև իսկական կարեկցանքի փոխարեն քո սրտում միայն կոնցեպտներ են, ընդհանրական պատկերացումներ, բարության կոնցեպտը, արդարության կոնցեպտը, հոլոքոսթի կոնցեպտը: Նա, ով իրապես կարեկցում է, հաց է ուտում կեղտոտ ձեռքերով, առանց լվացվելու, իսկ նա, ով հանգամանորեն օձառում է ձեռքերը ուտելուց առաջ նա ավելացնում է օձառի պահանջարկը համաշխարհային շուկայում: Օձառ է արտադրվում ավելի ու ավելի շատ, բայց դրանից ձեռքերն ավելի մաքուր չեն դառնում: Դու կարծում ես, թե կշեռքն ունի երկու նժար: Իրականում նժարը մեկն է՝ մեկ նժար թասի տեսքով, և այդ թասի մեջ ոչինչ չեն կշռում, դրանով խմում են: Յուրաքանչյուրն իր սեփական կյանքն է խմում: Եվ սուրբ Գրապը մթերային կշեռք դարձնելու կարիք չկա: Դու ինձ սիրում ես ինչ-ինչ պատճառների հետևանքով, իսկ քո կինը թունավորվել է միանգամայն ուրիշ պատճառների հետևանքով: Այստեղ կշռելու բան չկա, խմել է պետք:

*Երկարատև դադար:*

**Անդրեյ** - Անիծյալ խցանումների պատճառով մեքենաս վաճառեցի: Անհնար է մեքենայով երթևեկել քաղաքում: Տնից աշխատավայր հասնելը տևում է երկու ժամ,

իսկ մետրոյով՝ կես ժամ է: Իմ տան դռնից, մինչև ինստիտուտի դուռը կես ժամ է: Ես մետրոյով եմ գնում, գնացքի պատերին փակցված գովազդներն եմ կարդում, իմանում եմ, որ նոր-հրաշալի փոշեկույներ կան, որ կարելի է ապառիկով բնակարաններ գնել, որ կան տուրիստական երկրներ՝ Եգիպտոս, Թուրքիա: Կա Թուրքիա: Ես այնտեղ չեմ եղել, բայց գիտեմ, որ այն կա: Կան քաղաքներ, մարդիկ, մետրո, մեքենաներ: Կան խցանումներ: Եվ այդ ամենը գոյություն ունի: Այդ աշխարհը գոյություն ունի: Ես տեսնում եմ այդ աշխարհը: Ես մետրոյով շատ եմ երթնեկում: Ես իջնում եմ գետնի տակ: Այնտեղ էլ կյանք կա: Գետնի տակ նույնպես կյանք է: Այնտեղ մութ թունելներ են: Այնտեղ պայծառ լապտերներ են: Այնտեղ հոսանք է: Ես իջնում եմ գետնի տակ, այնտեղ նույնպես կյանք է: Ես իջնում եմ գետնի տակ: Ինքս եմ այդ ճանապարհն ընտրել ինձ համար: Խցանումների պատճառով որոշեցի վաճառել մեքենաս և իջնել գետնի տակ, որովհետև այդպես արագ է: Ես իջնում եմ գետնի տակ: Իջնում եմ գետնի տակ... Ի՞նչ էի ուզում ասել քեզ... չեմ հիշում... Որտե՞ղ կանգ առա... Ի՞նչ էի ասում... Հա, ասում էի, որ իջնում եմ գետնի տակ... ասել եմ արդեն... արդեն ասել եմ... արդեն չեմ հիշում՝ հետո ինչ էի ուզում ասել... Ներիր, ես վատ եմ զգում: Պետք է գնամ: Հետո կխոսենք:

*Անդրեյն ոտքի է կանգնում և թեթևակի ճռճվելով գնում է դեպի դուռը:*

**Կատյա** - Դու վատ ես, արի ուղեկցեմ քեզ:

**Անդրեյ** - Ոչ, ոչ: Ես տուն կգնամ, այնտեղ երեխաներս են: Ուզում եմ մենակ մնալ: Ես մետրոյով կգնամ, կիջնեմ գետնի տակ, ժամանակն է... Ցտեսություն:

*Անդրեյը հեռանում է: Կատյան մնում է մենակ:*

*Դադար:*

*Ներս է մտնում Ալինան:*

**Ալինա** - Ես արդեն խոսել եմ բուժքրոջ հետ և գիտեմ, որ ամեն ինչ լավ է: Փառք Աստծո, ամեն ինչ բարեհաջող ավարտվեց: Օֆ:

**Կատյա** - Ինչո՞ւ եկար, հեռախոսով կարող էիր ամեն ինչ իմանալ, մամ:

**Ալինա** - Ես զանգել եմ քեզ, հեռախոսդ անջատված է, և ես հասկացա, որ հիվանդանոցում ես: Չէ՞ որ ես էլ տեղս չեմ գտնում, չէ՞ որ ես էլ ինձ մեղավոր եմ զգում:

**Կատյա** - Բայց ես ինձ մեղավոր չեմ զգում, մամ:

**Ալինա** - Բայց և այնպես՝ դու մեղավոր ես: Դու և Անդրեյը խեղճ կնոջը ինքնասպանության հասցրեցիք:

*Դադար:*

**Կատյա** - Ինչո՞ւ ես եկել, մամ:

*Դադար:*

**Ալինա** - Հիշո՞ւմ ես մի վաղեմի ծանոթ ունեի, Լերա էր անունը, դուք հանդիպել եք Կիևում, ռեստորանում, այն օրը, երբ պարում էիր, տիպիկ, ինտելիգենտ կին էր:

**Կատյա** - Ոչ, մայրիկ, ներիր՝ չեմ հիշում:

**Ալինա** - Թերևս. նա մեր տուն երբևէ չի եկել, բայց երիտասարդ ժամանակ շփվում էինք: Հետո մենք հանդիպեցինք Կիևում՝ ռեստորանում: Իհարկե, դու նրան չես հիշի, քո շուրջն այնքան մարդիկ էին պտտվում: Պարզապես, այսօր ես իմացա, որ արդեն երկու տարի է, ինչ նա մահացել է: Տարօրինակ է, երկու տարի է անցել, իսկ ես այդ մասին չեմ էլ իմացել:

**Կատյա** - Դուք մտերի՞մ էիք:

**Ալինա** - Ո՞նց ասեմ: Կասեի՝ ոչ: Դեռ շատ երիտասարդ ժամանակ մենք նույն շրջապատն ունեինք, հետո, կամաց-կամաց ավելի հազվադեպ էինք հանդիպում: Բայց ես գիտեմ, որ նա շատ էր հավանել քո պարը: Մանավանդ, որ նա բալետի քննադատ էր:

**Կատյա** - Իսկ նրա ազգանունն ի՞նչ է:

**Ալինա** - Չեմ հիշում: Կարևոր էլ չէ: Նա երբևէ չի գրել քո և քո պարի մասին: Գիտես՝ ինչո՞ւ: Որովհետև խենթանալու չափ հավանել էր քո պարը: Մի անգամ, երկու տարի առաջ էր, ես նրան հանդիպեցի մեզ ծանոթ դերասաններից մեկի հորեյանական երեկոյին, և ամբողջ ընդմիջման ժամանակ մենք խոսեցինք: Եվ ամբողջ ընթացքում խոսում էինք քո պարի մասին: Եվ նա ինձ ասաց, որ չի կարող գրել պարիդ մասին, որովհետև արտասովոր պար է՝ հրաշք է, իսկ հրաշքը բառերով հնարավոր չէ նկարագրել: Մի խոսքով, քննադատը խոստովանեց, որ քննադատական հոդված գրելու համար բառեր չկան: Իմ կարծիքով դա գովեստ է:

*Դադար:*

**Ալինա** - Մի՞թե չես հիշում նրան: Տիպիկ ինտելիգենտ-քննադատուհի էր: Անունը Լերա էր: Վալերիա... ըրը... հայրանունն էլ չեմ հիշում: Տարիքով կին էր՝ արիստոկրատ շարժուձևով:

**Կատյա** - Ցավոք, ոչ, չեմ հիշում, մայրիկ, բայց կուզեի ճանաչել նման քննադատին :

**Ալինա** - Ուշ է, արդեն: Այսօր ես պատահմամբ իմացա, որ երկու տարի է, ինչ նա էլ չի ապրում:

*Դադար:*

**Ալինա** - Մենք մոտ ընկերուհիներ չենք եղել, ես ազգանունն անգամ չեմ հիշում, բայց, չգիտես ինչու ես տխրեցի, երբ իմացա, որ մահացել է:

*Դադար:*

**Ալինա** - Շատ-շատ տխուր եմ, որ նա մահացել է:

*Դադար:*

**Կատյա** - Ինչո՞ւ ես եկել մայրիկ:

**Ալինա** - Ուզում էի տեսնել՝ ինչպես է սիրտդ կոտրվել վշտից: Ուզում էի տեսնել, որ դու նույնպես տառապում ես , որ քեզ էլ է վերաբերում մեր աշխարհը և ամենն, ինչ նրանում կատարվում է: Սակայն տեսնում եմ՝ սին հույսեր էին: Դու, ինչպես միշտ, քո տարօրինակ աշխարհում ես ու չես ուզում այնտեղից քիթդ հանել, որպեսզի մասնակից լինես մեր տառապանքների: Դու թքած ունես մեզ վրա: Բոլորիս, առանց բացառության:

**Կատյա** - Եկել ես, որ իմ տառապանքը տեսնես: Ուրեմն, իզուր չես եկել մամ: Ես տանջվում եմ: Կարող ես նայել, ես տանջվում եմ, մամ: Իզուր չես եկել: Տես: Տանջվում եմ:

**Ալինա** - Ներիր, բայց ես դա չեմ տեսնում:

**Կատյա** - Գուցե ուշադիր չե՞ս նայում:

*Ալինան սևեռուն նայում է Կատյայի դեմքին:*

**Ալինա** - Չէ, ուշադիր եմ նայում, բայց չեմ տեսնում:

**Կատյա** - Պարզապես չես ուզում տեսնել:

**Ալինա** - Ես ուզում եմ տեսնել, շատ եմ ուզում, և շատ ուշադիր եմ նայում, բայց չեմ տեսնում:

*Կատյան և Ալինան անթարթ նայում են միմյանց:*

**Կատյա** - Ո՞ւր ես նայում, մայրիկ:

**Ալինա** - Դու տեսնում ես՝ ուր եմ նայում: Աչքերիդ մեջ:

**Կատյա** - Եվ ի՞նչ:

**Ալինա** - Ես այնտեղ ոչինչ չեմ տեսնում:

**Կատյա** - Տարօրինակ է:

**Ալինա** - Նայում եմ ու չեմ տեսնում: Տարօրինակ է:

**Կատյա** - Ավելի ուշադիր, ավելի ակնապիշ նայիր:

**Ալինա** - Նայում եմ, ինչքան ուժ ունեմ՝ նայում եմ:

**Կատյա** - Եվ ի՞նչ:

**Ալինա** - Ոչինչ:

**Կատյա** - Նայիր, իսկապես նայիր, ամբողջ ուժով:

**Ալինա** - Նայում եմ ոնց կարողանում եմ: Դեռ ոչինչ չեմ տեսնում:

**Կատյա** - Նայիր, ինչքան կարող ես:

**Ալինա** - Նայում եմ, ոնց կարող եմ: Դեռ ոչինչ չեմ տեսնում:

**Կատյա** - Նայիր, լավ նայիր: Ինչքան կարող ես:

**Ալինա** - Չեմ տեսնում: Ես չեմ տեսնում: Չեմ տեսնում, որ դու տանջվում ես, աղջիկս: Ես դա չեմ նկատում: Չեմ ուզում նկատել: Ես վախենում եմ տեսնել: Վախենում եմ խոստովանել: Ես չեմ ուզում մտածել քո տանջանքի մասին: Ինձ իմն էլ բավական է: Ներիր ինձ, լսո՞ւմ ես, խնդրում եմ, ներիր: Ամբողջ կյանքում ես չեմ նկատել քո տանջանքները, չեմ ուզել տեսնել: Ես այստեղ եկա, որ քեզ ասեմ այդ մասին: Որ ներողություն խնդրեմ: Ներիր ինձ, խնդրում եմ, աղաչում եմ՝ ներիր:

*Ալինան դեմքը հպում է Կատյայի կրծքին ու լաց է լինում՝ փոքր երեխայի պես: Կատյան մորը գրկած նույնպես լաց է լինում: Գալիս է բուժքույրը:*

**Բուժքույր** - Ներեցեք, ես հասկանում եմ, որ ձեր վիշտը մեծ է, բայց ինձ տուժածի ամուսինն է պետք: Անհրաժեշտ է որոշ փաստաթղթեր ստորագրի:

**Կատյա** - Հասկանո՞ւմ եք, նա վատ էր զգում և գնաց: Վաղը նա անպայման կգա և կստորագրի:

**Բուժքույր** - Իսկ այս կինը պատահմամբ մեր հիվանդի մայրը չէ՞:

**Կատյա** - Ոչ, իմ մայրն է:

**Բուժքույր** - Ներեցեք, իսկ դուք հիվանդի ի՞նչն եք:

**Կատյա** - Ես նա եմ, ում պատճառով ձեր հիվանդն ուզել է ինքնասպան լինել: Ես նրա ամուսնու սիրուհին եմ:

**Բուժքույր** - Վայ, այ քեզ բան: Ես միայն ուզում էի ճշտել՝ եթե դուք նրա ազգականուհին եք, դուք էլ կարող էիք ստորագրել այդ փաստաթղթերը՝ ամուսնու փոխարեն: Բայց դուք ինչպես հասկացա բարեկամը չեք:

**Կատյա** - Արդեն ասացի՝ ով եմ:

**Բուժքույր** - Պարզ է: Ինձ ամեն ինչ պարզ է: Իսկ ինչո՞ւ է ձեր մայրը լաց լինում, չէ՞ որ ոչ ոք չի մահացել:

**Կատյա** - Նրան ասացին իր ծանոթներից մեկի մահվան մասին, դրա համար է լաց լինում:

**Բուժքույր** - Վայ, ներեցեք, ցավակցում եմ: Հանգստացնող կուզե՞ք, ես կարող եմ բերել

*Ալինան թաշկինակով մաքրում է քիթը, մի փոքր հանդարտվում է:*

**Ալինա** - Ոչ, շնորհակալ եմ: Արդեն լավ եմ: Պետք է գնանք, աղջիկս, գնացինք:

**Կատյա** - Մենք արդեն գնում ենք: Մի անհանգստացեք:

*Ալինան բռնում է Կատյայի ձեռքը և գնում են դեպի ելքը:*

**Կատյա** - Մնացեք բարով:

**Բուժքույր** - Ամենայն բարին, ցտեսություն:

*Ալինան և Կատյան գնում են: Բուժքույրը մնում է մենակ: Նա մեքենայաբար թերթում է չստորագրված փաստաթղթերը:*

*Վարագույրը փակվում է: Դերասանները գալիս են նախաբեմ, խոնարհվում են հանդիսատեսին:*

## Պիես №7

### Խորը և մակերեսային քնի մեջ

Գործող անձինք՝

**Օլգա**  
**Բուժքույր**

*Վարագույրը բացվում է:*

*Քաղաքային հիվանդանոցի առանձնասենյակ այցելուների համար: Մենյակում արհեստական կաշվով ծածկված թախտ է և մեկ աթոռակ:*

*Պատին փակցված է պլակատ՝ «Ծխելը վնասակար է առողջությանը»:*

*Օլգան նստած է թախտին: Մտնում է բուժքույրը:*

**Բուժքույր** – Ցավում եմ, բայց ես շատ վատ լուր եմ բերել, ձեր ամուսինը մահացավ: Տասը ռուպե առաջ: Բժիշկն արեց ինչ կարող էր: Ինքը ձեզ կես ժամից կմոտենա, հենց իր գործը ավարտի: Ցավում եմ: Կուզե՞ք վալիդոլ կամ, գուցե ավելի ուժեղ հանգստացնող միջոց: Բժշկական օգնության կարիք ունե՞ք:

**Օլգա**- Ոչ: Ինձ ոչինչ պետք չէ: Իսկ Ձեզ հավանաբար պետք է վճարել, պայուսակիս մեջ փող ունեմ:

*Օլգան մեքենայաբար փնտրում է պայուսակում:*

**Բուժքույր** - Ի՞նչ եք անում, պետք չէ: Մեզ մոտ ընդունված չէ: Վա՞տ եք զգում:

**Օլգա** - Ոչ, ոչ: Այսինքն՝ այո, շատ վատ եմ: Պարզապես ուզում եմ այսպես նստել: Եվ դեռ ոչինչ չանել, կարելի՞ է:

**Բուժքույր** - Այո, այո: Իհարկե: Ես մնամ ձեզ հետ, թե՞ ուզում եք մենակ լինել:

**Օլգա** - Ուզում եմ մենակ լինել: Կարևոր չէ: Մի գնացեք:

**Բուժքույր** - Ես այստեղ, ձեզ հետ եմ: Ուզում եմ ձեզ հետ կիսել ձեր դժբախտությունը: Կուզե՞ք՝ լաց եղեք, կուզեք ինձ ինչ-որ բան պատմել՝ պատմեք:

**Օլգա** - Ոչ, ավելի լավ է դուք մի բան պատմեք:

**Բուժքույր** - Ե՛ս... ձե՛զ... լավ: Կուզե՞ք ձեզ պատմեմ «Դելի» պարի մասին:

**Օլգա** - Պարի՞: Ի՞նչ պար:

**Բուժքույր** - «Դելի» պարի մասին: Պարը կոչվում է «Դելի»: Ի պատիվ Հնդկաստանի մայրաքաղաք Դելիի: Պարը մի երիտասարդ կին է ստեղծել, որ հայտնի պարուհի էր: Մի անգամ հյուրախաղերով նա հայտնվում է Դելի քաղաքում: Եվ այնտեղ հայտնվում է մի շատ տարօրինակ վայրում: Որտեղ շատ են մարդկային տառապանքները: Դա շուկա էր: Եվ այնտեղ կային խեղանդամ աղքատներ և կեղծ զարդեր վաճառող կեղտոտ առևտրականներ: Եվ շոգին կախված խոզերի հոտած լեշեր, ու մարդիկ կերակուր էին ուտում կեղտոտ ձեռքերով: Ու երբ նա տեսել է այդ ամենը, պարուհին,

հանկարծ մի այնպիսի ցավ է զգացել, որ ասես, սրտին շիկացած երկաթ են դրել: Եվ այդ շուկայում այդ պարուհին այդպիսի ցավ է զգացել:

**Օլգա** - Իսկ ինչու՞ է այդպիսի ցավ զգացել: Պատճառն ի՞նչ էր:

**Բուժքույր** - Պատճառն այն մարդիկ էին, որոնց նա տեսավ:

**Օլգա** - Նա, այդ պարուհին, հավանաբար շատ նրբազգաց է եղել: Ինչու՞ էր օտար-անծանոթների համար այդպիսի ցավ զգացել:

**Բուժքույր** - Ոչ, այդ ցավը այդ մարդկանց համար չէր: Ոչ էլ այդ մարդկանց ճակատագրերի համար էր: Դա նրանց ցավն էր: Այդ մարդկանց ցավն էր: Հասկանու՞մ եք: Ոչ թե նրանց համար է ցավ զգացել, այլ նրանց ցավն է զգացել: Նա նրանց չի խղճացել և չի մտածել նրանց դժբախտ ճակատագրի մասին: Պարզապես, հանկարծ զգացել է այն մարդկանց ցավը, ովքեր պատահաբար հայտնվել էին իր շուրջը: Նա, հանկարծ, զգացել է ցավը մարդկանց մեջ: Եվ նա, հանկարծ, զգացել է այդ ամբողջ ցավը: Այդ բոլոր մարդկանց ցավը: Եվ այդ ցավը մխրճվել է նրա մեջ, նրա սրտի ամենախորքը և ընդմիջտ մնացել այնտեղ: Ոչ խղճահարություն է եղել, ոչ էլ ցավ ուրիշների համար, այլ ուրիշների ցավը դարձել է իր սրտի ամենախորքում իր ցավը:

**Օլգա** - Տեր Աստված, ինչքան ծանր կլինի վերցնել այդքան ցավ: Անգամ սեփական ցավից է սիրտդ կտոր-կտոր լինում: Ու մի բան էլ օտարներին: Եվ ի՞նչ եղավ այդ խեղճ կնոջը:

**Բուժքույր** - Նա սկսեց վերածել այդ ցավը չքնաղ պարի և ազատել այդ ցավը: Նա ստեղծեց հրաշալի, կախարդական մի պար և անվանեց այն «Դելի»: Նա ուրիշ մարդկանց ցավը կարողացավ հմուտ բժշկի պես վերածել գեղեցկության ու երանության ու նվիրեց ազատություն: Նա ուրիշ մարդկանց ազատագրեց իրենց իսկ ցավից: Նա այնպես արեց, որ ցավը պակասի: Թույլ տալով, որ ցավը մտնի իր սրտի մեջ, նա վերածեց ցավը շաղագող գեղեցկության ու հանգստության: Նա նվազեցրեց ցավի քանակը մեր երկրի վրա: Նա չբազմապատկեց ցավը ուրիշների նման խոսելով ցավի մասին, չավելացրեց այն, չպայքարեց ցավի դեմ, այլ, հակառակը, տեղավորեց ուրիշների ցավը իր սրտի կենտրոնում և այնտեղ լուծեց այդ ցավը իր անսահման կարեկցանքի շողերում: Ահա: Ահա, պատմեցի ձեզ «Դելի» պարի մասին:

**Օլգա** - Շատ գեղեցիկ հնչեց ձեր պատմածը: Իսկ հիմա որտե՞ղ կարող եմ տեսնել այդ պարը: Թե՞ այդ պարուհին այլևս ելույթ չի ունենում:

**Բուժքույր** - Ոչ, չի ունենում: Երկու տարի առաջ նրա սիրտը կանգ առավ և նա մահացավ: Հենց այս հիվանդանոցում: Ես ներկա էի նրա մահվանը: Չէ որ ես նրա երկրպագուն էի, երբ նա ելույթ էր ունենում մեր քաղաքում, ես միշտ գնում էի նայելու: Ես չէի կարող պատկերացնել անգամ, որ այն կինը, ում ես պաշտում էի, մեռնելու է իմ ձեռքերին: Նրա մահը ընդմիջտ միացրեց ինձ և նրան: Ես միշտ կհիշեմ՝ ինչպես էր բաբախում նրա սիրտը և ինչպես այն կանգ առավ: Այդ հիշողությունն իմ ողջ կյանքի իմաստն է:



**Օլգա** - Գիտեք, ես հիմա այնպիսի ցավ եմ զգում: Կարո՞ղ եք հուշել ինձ` ինչ անեմ: Չե՞ որ գեղեցիկ պատմում եք այդ ամենի մասին: Եվ դուք տեսել եք այդ բուժիչ պարը, ի՞նչ անեմ, անտանելի ցավ եմ զգում: Ամուսինս մահացել է, ես երկու երեխա ունեմ: Նա ինձ դավաճանուն էր: Մեր համատեղ կյանքի վերջին տարին շատ բարդ էր, ես շատ եմ տանջվել: Նա ուրիշ կնոջ սիրեց, այնքան ցավոտ էր: Ես կարծում էի` ավելի մեծ տառապանք չի լինում: Նույնիսկ որոշեցի ինքնասպան լինել: Երկու շիշ քնաբեր խմեցի, բայց ինձ փրկեցին: Իսկ ամուսինս չդիմացավ այս ամենին, և, ահա` նրա սիրտը կանգ առավ: Այսօր նա մահացավ ձեր ձեռքերի վրա, ճիշտ ինչպես երկու տարի առաջ այն պարուհին էր մահացել: Ես ի՞նչ անեմ: Չեմ դիմանում այս ցավին... ու երևի թե սա դեռ սկիզբն է, իսկական ցավն ու հուսահատությունը դեռ առջևում են երևի, երբ տուն վերադառնամ ու երեխաներիս պատմեմ մեր վիշտի մասին: Ու հետո ես կմնամ մենակ ու միայնակ կյանք կվարեմ ու երևի այն ժամանակ ավելի վատ կլինի, քան հիմա, բայց հիմա էլ անտանելի է: Ի՞նչ անեմ: Օգնեք ինձ խնդրում եմ, շատ եմ խնդրում: Դուք այնքան հրաշալի բաներ եք պատմում: Փրկեք ինձ այս անտանելի ցավից: Ցավը «Դելի» պար դարձրեք: Ես չեմ դիմանա այս ամենին: Խնդրում եմ ձեզ:

**Բուժքույր** - Ես ընդամենը, կարող եմ ձեզ պատմել այն, ինչ տեսել եմ: Կարող եմ միայն պատմել այդ պարի մասին, ես, ընդամենը դիտորդ եմ: Կարող եմ, ընդամենը ծանոթացնել ձեզ այդ պարին, ես ընդամենը ակնաստես եմ:

**Օլգա** - Պատմեք, ինչ կուզեք, միայն, խնդրում եմ, մի լռեք: Երբ լռություն է տիրում ես միայնությունն ու վախ եմ զգում: Էլի պատմեք այդ պարի մասին: Ինչի՞ց էր սկսվում և ինչո՞վ էր ավարտվում: Ես ձեզ կլսեմ: Խնդրում եմ: Միայն մի լռեք: Խնդրում եմ:

*Դադար:*

**Բուժքույր** - Այդ պարը սկսվում էր այն բանից, որ պարուհին մեզ ցույց էր տալիս, թե քնում է: Սկզբում պարուհին քնած է, ու երազում ծնվում են պարի առաջին շարժումները: Նրա ամբողջ մարմինը, աստիճանաբար, սկսում է ենթարկվել այդ շարժումներին: Միևնույն ժամանակ մենք հստակ հասկանում ենք, որ պարը ծնվում է պարուհու կամքից անկախ, այդ պարը ծնվում է ինքնուրույն ծնվում է երազի մեջ, այն հայտնվում է երազից, իսկ պարուհին միայն ենթարկվում է այդ պարին: Պարը ստեղծողը պարուհին չէ, ավելի ճիշտ, նա հենց պարն է որ կա: Ինչպես բացատրեմ` չգիտեմ: Հնարավոր է սրանք ընդհամենը իմ ենթադրություններն են: Պարզապես, ես այդպես եմ զգացել, այդպես եմ հասկացել, երբ նայում էի: Չե՞ որ պարը ոչինչ չի բացատրում, պարը, պարզապես կատարվում է և վերջ: Հետո ես տեսա, որ այդ շարժումներում շատ ճակատագրեր կան: Ինչպե՞ս ես դա հասկացա: Նրա ձեռքերի սահուն գծերից: Ձերքերի գծերը, որ նման էին օվկիանոսի ալիքների, հիշեցրին ինձ այս երկրի վրա ապրող մեր բոլորիս ճակատագրերը: Բոլորիս ճակատագրերը ասես ալիքներ են կամ նույնիսկ նախշեր: Այո: Շատ ճիշտ բառ գտա` նախշեր: Բոլորիս ճակատագրերը ասես նախշեր են: Բայց եթե ուշադիր նայես, այդ նախշը չընդհատվող

մի գիծ է, որ անկրկնելի պատկերներ է ստեղծում: Մեկ գծով ստեղծվում են ձևեր: Եվ այդ ձևերը հենց մեր տարօրինակ ճակատագրերն են, որ նկարվում են մեկ չընդհատվող գծով: Եվ ամբողջ մեր ցավը, մեր տառապանքը, մեր հույսերը, ուրախություններն ու երազանքները, այդ ամենը չքնաղ նախշեր են մեկ չընդհատվող գծով ստեղծված: Մեկ գիծ է: Մեկ ցավ բոլորիս համար: Չէ որ մեկ ընդհանուր ցավ է բոլորիս համար: Մեկ գիծ և մեկ գեղեցկություն ու մեկ երջանկություն: Չէ որ երջանկությունը մեկն է բոլորիս համար: Երբ քնած ենք, բոլորս հավասար ենք: Քնում բոլորս հավասար ենք: Քնով էր սկսվում նրա պարը և քնով ավարտվում: Եվ նորից մեր ցավի և ուրախության այդ հրաշալի նախշերը վեր էին ածվում բրդյա թելի, որից գործում են գուլպաներ ու թարթմաններ, այդ բրդյա թելը սկիզբ էր առնում մեծ բրդյա կծիկից: Այդ բրդյա կծիկը, պարզվեց, մեր երանելի քունն էր: Մենք կրկին մտնում էինք մեր քնի խորքերը՝ մեկ ընդհանուր քնի, մեր բոլորիս համար: Վերջ: Այսքանն էր ամբողջ պարը:

*Դադար*

*Օլգան փակ աչքերով պատկած է թախտին: Նա քնած է:*

*Վարագույրը փակվում է*

*Դերասանները գալիս են նախաբեմ, վարագույրից առաջ, խոնարհվում են հանդիսատեսին:*

*(Վարջավա, 1 հունիսի 2010 թ.)*

Թարգմանությունը՝ Նունե Վարդանյանի

Խմբագրությունը՝ Հռիփսիմե Շահինյանի